Հավելված 1
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2025 թվականի
նոյեմբերի 26-ի ԿԽ-08/25/2 որոշման

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՏԱՐԵԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուսուցման սույն ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց (այսուհետ՝ Ունկնդիրներ) 2026 թվականի վերապատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:
2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) կողմից՝ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի, ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովի՝ 25.07.2025թ. թիվ N 14/25-Ու որոշման պահանջներին համապատասխան:
3. Ծրագրի նպատակն է ապահովել Ունկնդիրների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործումը հետևյալ հիմնական ոլորտներում՝

1) <u>Ընդհանուր և հարակից մասնագիտական ոլորտ.</u>

Վերապատրաստման գործընթացը վերաբերում է դատավորի էթիկայի, վարքագծի կանոնների, դատական արհեստի, հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցերի, ՀՀ սահմանադրական արդարադատության արդի հարցերի, դատական ակտերի մշակման հմտությունների, Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի, էլեկտրոնային արդարադատության, դատավորին անհրաժեշտ համակարգչային-տեղեկատվական ռեսուրսների օգտագործման հմտությունների, մեդիա իրավունքի, իրավաբանական գրի և մեթոդաբանության, կառավարման հմտությունների և ներազդման հոգեբանության, հաշմանդամություն ունեցող անձանց և այլ խոցելի խմբերի մասնակցությամբ գործերի քննության, նրանց իրավունքների, ինչպես նաև նրանց հետ վարվեցողության կանոնների, Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարվող միջոցառումների, դատավորների, դատախազների և քննիչների գործունեության միջոցով գենդերային հավասարության ապահովման, հոռետորական արվեստի և հաղորդակցման, համակարգչային ան-

վտանգության, կարգապահական պատասխանատվության մեխանիզմների՝ որպես արտակարգ դատական վեթինգի այլընտրանքի բարելավման, դատական իշխանության անկախության և այլ ոլորտներում Ունկնդիրների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործմանը:

2) Հատուկ մասնագիտական ոլորտ.

- **Սնանկության մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ.**

Վերապատրաստումը նպատակ է հետապնդում հետևողականորեն կատարելագործելու Ունկնդիրների մասնագիտական գիտելիքները և աշխատանքային ունակությունները սնանկության վարույթի, քաղաքացիական դատավարության, պարտավորական հարաբերությունների, կորպորատիվ և բանկային իրավունքների արդի հարցերի, սնանկության գործերով միջազգային պրակտիկայի, ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների դիրքորոշումների, սնանկության գործի շրջանակներում քննվող քաղաքացիական գործերի, ֆինանսական կառավարման առանձնահատկությունների և արդի այլ հիմնախնդիրների շուրջ:

- **Քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ.**

Վերապատրաստման գործընթացը նպատակ է հետապնդում հետևողականորեն կատարելագործելու Ունկնդիրների մասնագիտական գիտելիքները և աշխատանքային ունակությունները քաղաքացիական դատավարության, քաղաքացիական իրավունքի, ՄԻԵԴ, ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումների, ոչ նյութական վնասի հատուցման, հաշտարարության և արբիտրաժի, պարտավորական հարաբերությունների, կորպորատիվ և աշխատանքային իրավունքների, հատուկ հայցային վարույթի և հատուկ վարույթներով գործերի քննության առանձնահատկությունների, ընտանեկան իրավունքի և արդի այլ առանցքային հիմնախնդիրների շուրջ:

- **Վարչաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ.**

Վերապատրաստման գործընթացը նպատակ է հետապնդում հետևողականորեն կատարելագործելու Ունկնդիրների մասնագիտական գիտելիքները և աշխատանքային ունակությունները ՀՀ վարչական իրավունքի և վարչական դատավարության, հատուկ վարույթի գործերի քննության, վարչական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման, ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումների, հարկային և մաքսային իրավունքների, տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտներում առանցքային նշանակություն ունեցող արդի հիմնախնդիրների շուրջ:

- **Քրեաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ.**

Վերապատրաստման գործընթացը վերաբերում է քրեական իրավունքում և դատավարությունում առկա արդի խնդիրներին: Մասնավորապես, վերապատրաստումն ուղղված է Ունկնդիրների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործմանը ՀՀ քրեական իրավունքի և քրեական դատավարության, պատիժ նշանակելու, կատարելու, պատժից ազատելու կամ այն փոխարինելու նյութաիրավական և դատավարական հիմնախնդիրների, քրեական գործերով ՄԻԵԴ, ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումների կիրառման, միջազգային դատարանների իրավակիրառ պրակտիկայի և միջազգային համագործակցության, կալանքի և այլընտրանքային խափանման միջոցների կիրառման, իրավաբանական անձանց քրեա-

կան պատասխանատվության քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրների, անչափահաս կամ խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանության, կիբերհանցագործությունների վերաբերյալ գործերի առանձնահատկությունների, խոցելի խմբերի նկատմամբ կատարված հանցագործությունների քննության, խոշտանգումների քրեաիրավական բնութագրի և քննության առանձնահատկությունների, զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների, մինչդատական քրեական վարույթի ընթացքում մարդու իրավունքների պաշտպանության, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ քրեական վարույթներով զոհակենտրոն մոտեցումների, զոհակենտրոն քննության և արդի այլ ոլորտներում:

- **Կոռուպցիոն հանցագործությունների քննության մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ.**

Վերապատրաստումը նպատակ է հետապնդում հետևողականորեն կատարելագործելու Ունկնդիրների մասնագիտական գիտելիքները և աշխատանքային ունակությունները կոռուպցիոն հանցագործությունների քննության, որակման, տնտեսական հանցագործությունների քննության, կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ ՄԻԵԴ պրակտիկայի, կոռուպցիայի կանխարգելման և շահերի բախման, հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման (փողերի լվացում) հանցագործության որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունների և արդի այլ ոլորտներում:

- **Հակակոռուպցիոն քաղաքացիաիրավական գործերի քննության մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ**

Վերապատրաստումը նպատակ է հետապնդում հետևողականորեն կատարելագործելու Ունկնդիրների մասնագիտական գիտելիքները և աշխատանքային ունակությունները ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման, ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ հայցի (նախնական) ապահովման միջոցների կիրառման և ապացույցների (նախնական) ապահովման, դատարանում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննության, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի վերաբերյալ ՄԻԵԴ-ի պրակտիկայի, Միջազգային պայմանագրերի անմիջական կիրառման առանձնահատկությունների, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում միջազգային համագործակցության և արդի այլ ոլորտներում:

<u>3) Հեռավար ուսուցման ձևով դասավանդվող դասընթացներ.</u>

Վերապատրաստման գործընթացը վերաբերում է հասարակագիտական ուղղվածության գիտելիքների և հմտությունների ձևավորմանն ու կատարելագործմանը: Մասնավորապես, վերապատրաստման արդյունքում Ունկնդիրները կընդլայնեն իրենց գիտելիքները և ունակությունները փաստարկման և հռետորաբանության, դատավորի վարպետության և դատական էթիկայի, գենդերով պայմանավորված ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրների, կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմի, անդրազգային կազմակերպված հանցավորության, միջազգային աշխատանքային իրավունքների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման ոլորտներում:

4. Պարտադիր վերապատրաստման ուսումնառության ժամաքանակը յուրաքանչյուր դատավորի համար կազմում է 80 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է երկու փուլով, յուրաքանչյուրը՝ 40 ակադեմիական ժամ (մեկ շաբաթ) տևողությամբ:

5. Դատավորների վերապատրաստումն իրականացվում է ընդհանուր և հարակից, հատուկ մասնագիտական ու հեռավար ուսուցման ձևով դասավանդվող դասընթացների մոդուլների հիման վրա: Յուրաքանչյուր դատավոր, իր մասնագիտացմանը համապատասխան, վերապատրաստվում է 40 ակադեմիական ժամ՝ հատուկ մասնագիտական դասընթացների շրջանակներում, և 40 ակադեմիական ժամ՝ ընդհանուր և հարակից մասնագիտական կամ հեռավար ուսուցման ձևով դասավանդվող դասընթացների շրջանակներում:
6. Ծրագիրն իրականացվում է առկա և հեռավար ուսուցման ձևերով:
7. Դատավորը չի կարող ընտրել իր մասնագիտացումից տարբերվող հատուկ մասնագիտական դասընթացների որևէ այլ մոդուլում ընդգրկված դասընթաց:
8. Առկա ուսուցման ձևով դասավանդվող առարկայական կուրսերի (դասընթացների) ընտրությունը դատավորի կողմից կատարվում է ըստ սույն հավելվածում ներկայացված փաթեթների:
9. Ուսումնառությունը սկսվում է դատավորների կողմից ընտրված առարկայական կուրսերի ցուցակն Ակադեմիա ներկայացնելուց հետո:
10. Առկա ուսուցման ձևով վերապատրաստման ժամանակացույց է սահմանվում 2026թ. ապրիլ-մայիս ամիսները՝ ընդհանուր և հարակից մասնագիտական, սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսները՝ հատուկ մասնագիտական առարկաներով, իսկ հեռավար ուսուցման ձևով՝ 2026թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսները:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

1. Ընդհանուր և հարակից մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-G-001-26	Դատավորի էթիկա, վարքագծի կանոններ և դատական արհեստ	4
2.	J-G-002-26	Հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցեր	4
3.	J-G-003-26	ՀՀ սահմանադրական արդարադատության արդի հարցեր	4
4.	J-G-004-26	Դատական ակտերի մշակման հմտություններ	4
5.	J-G-005-26	Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումն ու դրա դեմ պայքարը	4
6.	J-G-006-26	Էլեկտրոնային արդարադատություն	4
7.	J-G-007-26	Դատավորին անհրաժեշտ համակարգչային-տեղեկատվական ռեսուրսների օգտագործման հմտություններ	4
8.	J-G-008-26	Մեդիա իրավունք	10
9.	J-G-009-26	Իրավաբանական գիր և մեթոդաբանություն	2
10.	J-G-010-26	Կառավարման հմտություններ և ներազդման հոգեբանություն	6
11.	J-G-011-26	Հաշմանդամություն ունեցող անձանց և այլ խոցելի խմբերի մասնակցությամբ գործերի քննություն, նրանց իրավունքների, ինչպես նաև նրանց հետ վարվեցողության կանոնների հիմնահարցեր	4

12.	J-G-012-26	Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հիմնահարցեր	4
13.	J-G-013-26	Դատավորների, դատախազների և քննիչների գործունեության միջոցով գենդերային հավասարության ապահովման հիմնահարցեր	4
14.	J-G-014-26	Հռետորական արվեստ և հաղորդակցում	2
15.	J-G-015-26	Համակարգչային անվտանգություն	2
16.	J-G-016-26	Կարգապահական պատասխանատվության մեխանիզմների բարելավումը՝ որպես արտակարգ դատական վեթինգի այլընտրանք	4
17.	J-G-017-26	Դատական իշխանության անկախությունը	4

2. Սնանկության մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
18.	J-BN-001-26	Սնանկության վարույթի արդի հարցեր	10
19.	J-BN-002-26	ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր	4
20.	J-BN-003-26	Կորպորատիվ իրավունքի արդի հարցեր	6
21.	J-BN-004-26	Պարտավորական հարաբերությունների արդի հարցեր	6
22.	J-BN-005-26	Բանկային իրավունքի արդի հարցեր	4
23.	J-BN-006-26	Սնանկության գործերով միջազգային պրակտիկա, նախադեպային որոշումների ուսումնասիրություն	2
24.	J-BN-007-26	ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումները սնանկության գործերով	4
25.	J-BN-008-26	Սնանկության գործի շրջանակներում քննվող քաղաքացիական գործերի առանձնահատկությունները	4

3. Քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
26.	J-CV-001-26	Պարտավորական հարաբերությունների արդի հարցեր	6
27.	J-CV-002-26	Կորպորատիվ իրավունքի արդի հարցեր	4
28.	J-CV-003-26	Աշխատանքային իրավունքի արդի հարցեր	6
29.	J-CV-004-26	Քաղաքացիական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	4
30.	J-CV-005-26	ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր	12
31.	J-CV-006-26	Ոչ նյութական վնասի հատուցման հիմնախնդիրներ	4
32.	J-CV-007-26	ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումները քաղաքացիական գործերով	6
33.	J-CV-008-26	ՀՀ քաղաքացիական իրավունքի արդի հարցեր	12

34.	J-CV-009-26	Հատուկ հայցային վարույթի և հատուկ վարույթներով գործերի քննության առանձնահատկություններ	6
35.	J-CV-010-26	Հաշտարարություն և արբիտրաժ	6
36.	J-CV-011-26	Պետական գնումների գործընթացի բողոքարկման իրավական կարգավորումները	4
37.	J-CV-012-26	Ընտանեկան իրավունքի արդի հարցեր	6
38.	J-CV-013-26	Դատական գործերի դասակարգում, գործերի առաջնահերթության որոշում, դատական նիստերի նախապատրաստում	2

4. Վարչաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
39.	J-AD-001-26	ՀՀ վարչական վարույթի արդի հարցեր	14
40.	J-AD-002-26	ՀՀ վարչական դատավարության արդի հարցեր	14
41.	J-AD-003-26	Հատուկ վարույթի գործերի քննության առանձնահատկություն-ները	10
42.	J-AD-004-26	Տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնահարցեր	2
43.	J-AD-005-26	ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումները վարչական գործերով	6
44.	J-AD-006-26	Վարչական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	4
45.	J-AD-007-26	Հարկային և մաքսային իրավունքի արդի հարցեր	8
46.	J-AD-008-26	Դատական գործերի դասակարգում, գործերի առաջնահերթու-թյան որոշում, դատական նիստերի նախապատրաստում	2

5. Քրեաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
47.	J-CR-001-26	Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները, միջազգային դատարանների իրավակիրառ պրակտիկան և միջազգային համագործակցությունը	6
48.	J-CR-002-26	ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումները քրեական գործերով	4
49.	J-CR-003-26	ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	10
50.	J-CR-004-26	Պատիժ նշանակելու, կատարելու, պատժից ազատելու կամ այն փոխարինելու նյութաիրավական և դատավարական հիմնախնդիրներ	4
51.	J-CR-005-26	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	10
52.	J-CR-006-26	Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրներ	4
53.	J-CR-007-26	Կալանքի և այլընտրանքային խափանման միջոցների	4

		կիրառումը	
54.	J-CR-008-26	Անչափահաս կամ խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանությունը	4
55.	J-CR-009-26	Կիբեռհանցագործությունների վերաբերյալ գործերի առանձնահատկությունները	4
56.	J-CR-010-26	Խոցելի խմբերի նկատմամբ կատարված հանցագործությունների քննության առանձնահատկությունները	4
57.	J-CR-011-26	Դատական գործերի դասակարգում, գործերի առաջնահերթության որոշում, դատական նիստերի նախապատրաստում	2
58.	J-CR-012-26	Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրն ու քննության առանձնահատկությունները	2
59.	J-CR-013-26	Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ	4
60.	J-CR-014-26	Մինչդատական քրեական վարույթի ընթացքում մարդու իրավունքների պաշտպանություն	4
61.	J-CR-015-26	Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ քրեական վարույթներով զոհակենտրոն մոտեցումների և զոհակենտրոն քննության ապահովում	4

6. Կոռուպցիոն հանցագործությունների քննության մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
62.	J-AC-CR-001-26	Կոռուպցիոն հանցագործությունների քննության առանձնահատկությունները	10
63.	J-AC-CR-002-26	Կոռուպցիոն հանցանքների որակման հիմնահարցեր	10
64.	J-AC-CR-003-26	Հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման (փողերի լվացում) հանցագործության որակումը և քննության մեթոդիկան	6
65.	J-AC-CR-004-26	Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ ՄԻԵԴ պրակտիկա	4
66.	J-AC-CR-005-26	Կոռուպցիայի կանխարգելման արդի հարցերը	4
67.	J-AC-CR-006-26	Տնտեսական հանցագործությունների քննության առանձնահատկությունները	6

7. Հակակոռուպցիոն քաղաքացիաիրավական գործերի քննության մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք

68.	J-AC-CV-001-26	Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման արդի հիմնահարցեր	12
69.	J-AC-CV-002-26	Ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ հայցի (նախնական) ապահովման միջոցների կիրառումը և ապացույցների (նախնական) ապահովումը	8
70.	J-AC-CV-003-26	Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննությունը դատարանում	12
71.	J-AC-CV-004-26	ՄԻԵԴ-ի պրակտիկան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի վերաբերյալ	4
72.	J-AC-CV-005-26	Միջազգային պայմանագրերի անմիջական կիրառման առանձնահատկությունները և միջազգային համագործակցությունը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում	4

8. Հեռավար ուսուցման ձևով դասավանդվող դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
73.	J-D-001-26	Փաստարկում և հռետորաբանություն	40
74.	J-D-002-26	Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն. Կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը	40
75.	J-D-003-26	Սեռով պայմանավորված, ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրները	40
76.	J-D-004-26	Միջազգային աշխատանքային իրավունք	40
77.	J-D-005-26	Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարում	40
78.	J-D-006-26	Դատավորի վարպետություն և դատական էթիկա	40

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. J-G-001-26. Դատավորի էթիկա, վարքագծի կանոններ և դատական արհեստ

Դասընթացը պայմանավորված է դատավորի էթիկայի, վարքագծի կանոնների, դատական նիստի վարման, այլ երկրներում դատական նիստերի ընթացքի ուսումնասիրության, դատավարության մասնակիցների հետ հաղորդակցության շուրջ առկա իրավակարգավորումներով սահմանված չափանիշների, դատական անկողմնակալության, դատական իշխանության անկախության ներքին և արտաքին կողմերի, իրավական հիմքերի, երաշխիքների, ինչպես նաև սահմանադրաիրավական (դատաիրավական) բարեփոխումների շրջանակում դատական իշխանության անկախությանը վերաբերող հիմնահարցերի ներկայաց-

ման, այս ոլորտներում գիտելիքների ծավալի ընդլայնման և կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացի շրջանակում քննարկման առարկա կդառնան դատավորի էթիկայի կանոնները, դատավորի վարքագծի կանոններն ինչպես ի պաշտոնե գործելիս՝ պաշտոնական արարողությունների ընթացքում պետական այլ մարմինների հետ շփման ընթացքում, այնպես էլ այլ գործունեություն իրականացնելիս, դատավարության մասնակիցներին միմյանց հարգելուն պարտավորեցնելուն ուղղված բարոյահոգեբանական սաստող միջոցները, դատավորի արհեստի հմտությունները նիստերը կառավարելու, վարելու (մեկ տասնյակից ավելի մասնակցող անձանցով նիստերի կառավարման առանձնահատկությունները), հստակ որոշումներ կազմելու, հանրության, դատավարության մասնակիցների և ԶԼՄ-ների հետ հաղորդակցելու տեսանկյունից, հատուկ անդրադարձ կկատարվի դատավորի ինքնաբացարկի հիմքերին, դրանց կիրառման առանձնահատկություններին, դատական նիստի վարման կանոններին, ինչպես նաև դատավարության մասնակիցների, զանվածային լրատվության միջոցների հետ և այլ շփումներում դատավորի վարքագծի առանձնահատկություններին:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

2. J-G-002-26. Հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ ազգային օրենսդրության կիրառման կարողությունների զարգացման ու կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է՝

- խտրականության արգելքի և հավասարության ապահովման վերաբերյալ միջազգային պայմանագրերի ուսումնասիրություն,
- խտրականության առանձին ձևերի ուսումնասիրություն,
- միջազգային և ներպետական պրակտիկայում առկա իրավական հիմնախնդիրների վերհանում և քննարկում:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

3. J-G-003-26. ՀՀ սահմանադրական արդարադատության արդի հարցեր

Դասընթացն ուղղված է սահմանադրական արդարադատության արդի հարցերի վերաբերյալ գիտելիքների ընդլայնմանը և գործնական հմտությունների կատարելագործմանը:

Դասընթացը ներառում է քննարկման ենթակա հետևյալ հարցերի շրջանակը՝

- Սահմանադրական դատարանը՝ որպես ՀՀ-ում սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմին և վերջինիս փոխհարաբերությունները դատական իշխանության այլ մարմինների հետ,
- Սահմանադրական դատարանի առաքելությունը և լիազորությունները,
- Սահմանադրության պաշտոնական մեկնաբանության առանձնահատկությունները,
- վերացական և կոնկրետ վերահսկողության առանձնահատկությունները,
- Սահմանադրական դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավական համակարգում,
- իրավական դիրքորոշումները՝ որպես ՍԴ որոշումների անքակտելի բաղկացուցիչ տարր,
- Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը՝ որպես սահմանադրականության ամրապնդման երաշխիք,
- նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը դատարանների դիմումների հիման վրա,

– դատարանի կողմից ՍԴ դիմելու առանձնահատկությունները,
– սահմանադրական նորմերի կիրառման, իրավունքի և օրենքի գերակայության սկզբունքների ներդրման, ապահովման և դրանց մեկնաբանման գործնական և տեսական հնարավորությունները,
– իրավունքի զարգացման արդի մեթոդաբանությունը,
– հիմնական իրավունքի անմիջական կիրառման առանձնահատկությունները,
– իրավունքի միջամտության սահմանները որոշելը, իրավունքի միջամտության ստուգման սխեմաներ մշակելը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

4. J-G-004-26. Դատական ակտերի մշակման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է դատական ակտերի կազմման և համոզիչ իրավական վերլուծությունների կատարման, իրավամեկնաբանողական հնարքների կիրառման ոլորտներում կարողությունների և գործնական հմտությունների ձևավորման, կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է քննարկման ենթակա հետևյալ հարցերի շրջանակը՝
– դատական փաստաթղթերի ձևակերպման մեթոդները,
– արտահայտման հստակ ոճի ապահովումը, որը հասկանալի է նշված փաստաթղթերն ընթերցողների համար,
– գործոնները, որոնք պետք է հաշվի առնվեն դատական ակտի ձևակերպման ընթացքում (փաստեր և հարցեր, լսարան, հրապարակում),
– իրավաբանական մեթոդաբանություն, օրենքների մեկնաբանման և վերլուծությունների հետ կապված հմտություններ,
– նյութերի վերանայման մեթոդները,
– նյութահիրավական փաստերը վեր հանելու հմտություններ,
– տարատեսակ դատական փաստաթղթերի ձևակերպումը, ուշադրության սևեռումը կառուցվածքային տարբերություններին (ներածություն, հարցերի ներկայացում, փաստերի ներկայացում, իրավական սկզբունքների քննարկում, վերանայման չափանիշ, քննարկվող հարցերի հերթականություն, հարցեր, որոնց պետք է անդրադառնալ, գործերի հիշատակում (ներառյալ ՄԻԵԴ-ի վճիռները), մեջբերումներ, խուսափում շահերի պաշտպանությունից),
– դատական ձևակերպումներում հնարավոր խնդիրները (բառերով ծանրաբեռնվածություն, հստակության և պարզության պակաս, վատ կազմակերպում, թաքնված վերլուծություն, պերճություն և հումոր),
– դատական ակտի կառուցվածքի և կազմման, դատական ակտը հիմնավորելու հմտություններ (իրավական լեզու, իրավաբանական մտքի ձևակերպման գրագիտություն, փաստերի, ապացույցների, իրավանորմերի շարադրանք),
– լավ ձևակերպման ուղեցույցները,
– համատեղ վճիռների, տարբերվող կարծիքների ձևակերպման մեթոդներ:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

5. J-G-005-26. Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումը ու դրա դեմ պայքարը

Դասընթացն ուղղված է արդարադատության ողջ շղթայում գենդերի հիմքով բռնության դեմ պայքարին առնչվող հարցերի առանձնահատկությունների ուսումնասիրությանը, այս բնագավառում գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու կատարելագործմանը:

Դասընթացն ընդհանուր գիտելիքներ կապահովի կանանց դերի վերաբերյալ կարծրատիպերի և գենդերի հիմքով բռնության, Հայաստանում դրա տարածվածության և բռնության նկատմամբ վերաբերմունքին առնչվող հիմնահարցերի մասին, ինչպես նաև ընդհանուր պատկերացում կտա համապատասխան միջազգային գործիքակազմի և կիրառելի ստանդարտների վերաբերյալ: Դասընթացի շրջանակում անդրադարձ կկատարվի զոհի անվտանգությունն ապահովելու նպատակով անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների իրականացմանը, ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ հաշտարարության գործերում առկա հիմնահարցերին, միջգերատեսչական համագործակցության ստանդարտներին, քրեական վարույթի առանձնահատկություններին՝ գործի քննությունից մինչև դատավճռի կայացման փուլն ընկած ողջ ժամանակահատվածում, դատավորների կողմից գենդերազգայուն դատավարությունների անցկացման, ընտանեկան բռնության ուղեցույցի ուսումնասիրությանը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

6. J-G-006-26. Էլեկտրոնային արդարադատություն

Դասընթացը պայմանավորված է Ունկնդիրներին համակարգչային ծրագրերով աշխատելու, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և իրավական տեղեկատվական որոնման համակարգերից օգտվելու գիտելիքներ հաղորդելու, էլեկտրոնային արդարադատության և գործավարության հմտությունները զարգացնելու, դատական նիստերը պլանավորելու, գործերի քննության ընթացքում օգտագործվող էլեկտրոնային գործինքերը կիրառելու, ինչպես նաև այդ գիտելիքների ընդլայնման շարունակական զարգացման անհրաժեշտությամբ:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

7. J-G-007-26. Դատավորին անհրաժեշտ համակարգչային-տեղեկատվական ռեսուրսների օգտագործման հմտություններ

Դասընթացն ուղղված է դատական ակտերի նախագծերի մշակման գործընթացում համակարգչային և տեղեկատվական տեխնիկայից (այդ թվում՝ արհեստական ինտելեկտի միջոցով) ազատորեն օգտվելու, գործերի կազմակերպման համար համակարգչային ծրագրերից, այդ թվում՝ Microsoft Excel գործիքակազմից օգտվելու, համակարգչային անվտանգության, անհրաժեշտ համակարգչային-տեղեկատվական ռեսուրսների օգտագործման, տիրապետման, մասնագիտական գործունեության ընթացքում առաջացող հարցերի համար օպերատիվ լուծումներ մշակելու և այդ հարցերի լուծման ընթացքում կիրառված մեթոդների և գործողությունների վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ընդլայնմանն ու հմտությունների կատարելագործմանը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

8. J-G-008-26. Մեդիա իրավունք

Դասընթացն ուղղված է դատական նիստերի ընթացքում և դրանից դուրս զանգվածային լրատվության միջոցների հետ և այլ հանրային շփումներում մեդիա և տեղեկատվական դաշտի իրավական կարգավորումների վերաբերյալ Ունկնդիրների ակադեմիական և գործնական գիտելիքների և փորձառության ընդլայնմանն ու հմտությունների կատարելագործմանը, սոցիալական հարթակների օգտագործման հետ կապված հմտությունների զարգացմանը:

Դասընթացի շրջանակներում քննարկման առարկա կդառնան հետևյալ հարցերը՝

– լրագրողի, լրագրողական գործունեության հասկացությունը,

- սոցիալական մեդիան,
- սոցիալական հարթակների օգտագործման հետ կապված հմտությունները,
- բլոգեր, սոցիալական ցանցեր, քաղաքացի լրագրողներ,
- լրատվական գործունեություն իրականացնողներ,
- լրագրողի տեղեկատվության աղբյուրների պաշտպանությունը,
- լրագրողական չհրապարակված նյութերի տրամադրում,
- մամուլի կազմակերպությունների և լրագրողների տների խուզարկություն,
- լրագրողներին հետևելու արգելք,
- կեղծ լուրերի տարածումը և դրանց դեմ պայքար,
- կեղծ լուրերի տեսակները, տարածելու շարժառիթները,
- պայքար կեղծ լուրերի դեմ, միջազգային փորձ,
- մոռացված լինելու իրավունք,
- տեղեկատվության ազատությունը և զանգվածային լրատվության միջոցները,
- պրոակտիվ հրապարակում,
- տեղեկատվության տրամադրման պայմաններ, մերժում,
- հեղինակային իրավունքի հիմնախնդիրները ՋԼՄ-ներում,
- հեղինակային իրավունքի հասկացությունը, սկզբունքները, օբյեկտները,
- հեղինակային իրավունքի պաշտպանությունը ՋԼՄ-ներում,
- արհեստական բանականության գործածումը,
- պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության հիմնախնդիրները ՋԼՄ-ներում,
- զրպարտությունը և վիրավորանքը համացանցում (լայքեր, մեկնաբանություններ),
- պաշտոնատար անձանց քննադատությունը,
- մեդիա անվտանգություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- մեդիայի հետ կոմունիկացիոն հմտություններ,
- մեդիային առնչվող և մեդիայի հետ կապված բոլոր զարգացումները, մեդիա իրավունքին առնչվող հիմնահարցերը, կուսումնասիրվի մեդիա ոլորտում միջազգային փորձը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

9. J-G-009-26. Իրավաբանական գիր և մեթոդաբանություն

Դասընթացը պայմանավորված է համոզիչ իրավական վերլուծությունների կատարման, իրավամեկնաբանողական հնարքների կիրառման ոլորտում կարողությունների և հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- իրավավերլուծական ռազմավարությունների ընտրության հետ կապված գործնական հարցերը,
- օրենսդրական և նախադեպային տեքստերի հետ աշխատանքում իրավամեկնաբանողական հնարքների կիրառման հետ կապված գործնական հարցերը, իրավանորմերի վերլուծության մեթոդիկան,
- դատավարական փաստաթղթերի կազմման հմտությունները (իրավական լեզու, իրավական մտքի ձևակերպում, փաստերի, ապացույցների, իրավանորմերի շարադրանք),
- իրավունքի զարգացման արդի մեթոդաբանություն:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

10. J-G-010-26. Կառավարման հմտություններ և ներազդման հոգեբանություն

Դասընթացն անհրաժեշտ է կառավարման և առաջնորդության, ժամանակի կառավարման, ինչպես նաև հոգեբանական ազդեցության, դրա տեսակների, մեթոդների, մեխանիզմների և տարաբնույթ դրսևորումների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանք կենսագործելու կարողությունների ու հմտությունների զարգացման համար:

Դասընթացը ներառում է՝

- կառավարչական հմտություններն ու առաջնորդման ոճերը,
- արդյունավետ պլանավորումը,
- ժամանակի կառավարումը,
- սթրեսի կառավարում,
- թիմի ձևավորումը և թիմային աշխատանքի կազմակերպումը,
- ներազդման հոգեբանության հիմնական հասկացությունները, ներազդման տեսակները, մեթոդներն ու մեխանիզմները,
- կառուցողական (համոզում, ներշնչում և այլն) և ոչ կառուցողական (մանիպուլյացիա և այլն) ներազդման մեթոդների առանձնահատկությունները,
- կառուցողական և ոչ կառուցողական ներազդմանը դիմակայելու եղանակները:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

11. J-G-011-26. Հաշմանդամություն ունեցող և այլ խոցելի խմբերի մասնակցությամբ գործերի քննություն, նրանց իրավունքների, ինչպես նաև նրանց հետ վարվեցողության կանոնների հիմնահարցեր

Դասընթացը պայմանավորված է հաշմանդամություն ունեցող անձանց և այլ խոցելի խմբերի իրավունքների, նրանց հետ վարվեցողության կանոնների վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքները և գործնական հմտությունները կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝ հաշմանդամություն ունեցող անձանց և խոցելի այլ խմբերի իրավունքների, ինչպես նաև նրանց հետ վարվեցողության կանոնների, երեխայի հարցաքննության հոգեբանական առանձնահատկությունների մասին դրույթների քննարկումը, անչափահասների և այլ խոցելի խմբերի մասնակցությամբ դատական գործերի քննության առանձնահատկությունները, առկա խնդիրների վերհանումը, դրանց լուծման ուղղությունների մշակումը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին միջազգային և ներպետական օրենսդրական ոլորտի ուսումնասիրությունը, «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» Հաագայի 25.10.1980 թվականի Կոնվենցիայի կիրառման առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

12. J-G-012-26. Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարվող միջոցառումների վերաբերյալ հիմնահարցեր

Դասընթացը պայմանավորված է հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիոն երևույթների, դրանց դեմ տարվող պայքարի ընդհանուր իրավիճակի, շահերի բախումն ու կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում իրականացվող հիմնական աշխատանքների և դրանց արդյունքների, հակակոռուպցիոն պայքարի իրավական (ներպետական և միջազգային, այդ թվում՝ ԵՄ Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) և ԵՄ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ

պայքարի միջոցառումների գնահատման փորձագետների հանձնախմբի (Մանիվալ) հանձնարարականների, համապատասխան այլ շահագրգիռ կողմերի (հասարակական կազմակերպությունների, ՀԼՄ-ների) մասնակցության, կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների իրավասությունների և գործունեության, պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների, դատավորների բարեվարքությանը վերաբերող արդի խնդիրների, հայտարարագրերի լրացման և ներկայացման վերաբերյալ հարցերը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

13. J-G-013-26. Դատավորների, դատախազների և քննիչների գործունեության միջոցով գենդերային հավասարության ապահովման հիմնահարցեր

Դասընթացը պայմանավորված է գենդերային հավասարության ապահովման ոլորտում ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների զարգացման անհրաժեշտությամբ: Այն նպատակ ունի Ունկնդիրներին ծանոթացնելու գենդերի հիմքով խտրականության բացառմանը և գենդերային հավասարությանը, գենդերային կարծրատիպերին և կանխակալությանը, գենդերային հավասարության ապահովմանն առնչվող միջազգային, տարածաշրջանային և ազգային իրավական դաշտին:

Դասընթացը ներառում է զբաղվածության իրավունքի և ընտանեկան իրավունքի մեջ գենդերային հավասարության ապահովման առանձնահատկությունները, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության և քրեական արդարադատության ոլորտներում գենդերային հավասարության ապահովմանը վերաբերող հիմնախնդիրները:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

14. J-G-014-26. Հռետորական արվեստ և հաղորդակցում

Դասընթացը պայմանավորված է Ունկնդիրներին հաղորդակցման, փաստարկման, ճարտասանության և հռետորական արվեստի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և նշված ոլորտում համապատասխան հմտություններ զարգացնելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

15. J-G-015-26. Համակարգչային անվտանգություն

Դասընթացն անհրաժեշտ է կիբեռանվտանգության կամ տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության (ՏՏ անվտանգություն), համակարգչային համակարգերի պաշտպանության, դրանց ապարատային, ծրագրային ապահովման կամ էլեկտրոնային տվյալները գողությունից, ինչպես նաև իրենց մատուցած ծառայությունների խաթարումից կամ սխալից զերծ պահելու և դրանց կիրառման հմտությունները ձևավորելու համար:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

16. J-G-016-26. Կարգապահական պատասխանատվության մեխանիզմների բարելավումը՝ որպես արտակարգ դատական վեթինգի այլընտրանք

Դասընթացը պայմանավորված է արտակարգ դատական վեթինգի այլընտրանքային մեխանիզմների վերաբերյալ Ունկնդիրներին գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը վերաբերվում է դատական անկախությանը և պատասխանատվությանը, արտակարգ վեթինգի ռիսկերին, այլընտրանքային և սովորական պատասխանատվության մեխանիզմներին, արտակարգ այլընտրանքային միջոցառումներին վերաբերող հիմնախնդիրներին:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

17. J-G-017-26. Դատական իշխանության անկախությունը

Դասընթացը պայմանավորված է դատական իշխանության անկախության վերաբերյալ Ունկնդիրներին գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է դատական իշխանության երաշխավորմանն առնչվող այնպիսի հիմնահարցեր, ինչպիսք են՝ դատավորների և դատարանների անկախության հիմունքները, դատական իշխանության սահմանադրական և միջազգային հիմքերը, դատավորների ներքին անկախության ապահովման հիմնախնդիրները, դատավորների նյութական և սոցիալական անկախության ապահովման, ինչպես նաև դատավորների պատասխանատվության հիմքերը:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

18. J-BN-001-26. Սնանկության վարույթի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է սնանկության վարույթի ընթացքում ծագող իրավական հարցերի, սնանկության ոլորտի արդի հիմնախնդիրների, դրանց վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները և գործնական հմտությունները կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- սնանկության գործերի քննության կարգը, առանձնահատկությունները, նիստերի վարման գործնական հմտությունները,
- պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերն ու անվճարունակության հատկանիշները,
- սնանկ ճանաչված անձի և պարտատերերի իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերը (այդ թվում՝ պարտապանի անունից սնանկության կառավարչի կողմից հայց հարուցելու ինստիտուտի առանձնահատկությունները),
- պարտապանի, պարտատիրոջ կամ այլ անձանց՝ դատարան դիմելու պարտականությունը և վերջինիս չկատարման պարագայում պատասխանատվության առանձնահատկությունները,
- կեղծ և կանխամտածված սնանկության իրավական կարգավորումը,
- սնանկության վտանգի վարույթի առանձնահատկությունները (սնանկության վտանգի վարույթում ներկայացվող պարտապանի ֆինանսական առողջացման ծրագիրը, սնանկության վտանգի դիմումի հիման վրա պարտապանին սնանկ ճանաչելը),
- պարտապանի սնանկության վտանգի վերաբերյալ դիմումը բավարարելու հետևանքները,
- պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը (մորատորիումը), (այդ թվում՝ մորատորիումի ընթացքում որոշակի գործողությունների թույլատրումը և առանձնահատկությունները սնանկության վտանգի վարույթում),
- սնանկ ճանաչելու առանձնահատկությունները կամավոր և հարկադրված սնանկության դիմումների հիման վրա,
- պարտապանին սնանկ ճանաչելը պարտատիրոջ (պարտատերերի) դիմումի հիման վրա,
- պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու հետևանքները,
- սնանկության գործով առանձին պահանջների քննության կասեցման հիմքերը և կարգը,
- սնանկության կառավարչի լիազորությունները, գործողությունների վիճարկման առանձնահատկությունները,

- ապահովված իրավունքի (գրավով) առարկայի իրացման և ապահովված պահանջի չափը հաստատելու մասին դիմումի քննության կարգի հիմնախնդիրները,
- պարտապանի գույքի պահպանումը, գույքագրումը, իրացման կարգն ու առկա խնդիրները,
- պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման, քննարկման, հաստատման առանձնահատկություններն ու ժամկետները, դատարանի դերը ծրագրի գործողության ընթացքում,
- իրավաբանական անձի լուծարման և պարտապան անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման վարույթները,
- ապահովված, չապահովված և սահմանված ժամկետում դատարան չներկայացված պահանջների բավարարման առանձնահատկությունները, պահանջների բավարարման հերթականությունը,
- սնանկության անվիճելիությունը,
- ֆիզիկական անձանց սնանկության առանձնահատկությունները,
- բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության առանձնահատկությունները, օրենսդրահիրավական կարգավորումները,
- սնանկության պարզեցված ընթացակարգերը,
- սնանկության կառավարչի գործողությունների վիճարկումը,
- սնանկության գործի ավարտը,
- օտարերկրյա անձանց սնանկության գործերով իրավական օգնությունը,
- սնանկության ոլորտում օրենսդրական բացերը, դրանց վերաբերյալ դատական պրակտիկան:

Դասընթացը նախատեսված է սնանկության գործեր քննող դատավորների համար:

19. J-BN-002-26., J-CV-005-26. ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է քաղաքացիական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները և դրանց կիրառման գործնական հմտությունները կատարելագործելու, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ներդրված նոր ինստիտուտները և իրավակարգավորումները կատարելագործելու, ՀՀ քաղաքացիական դատավարության և «Սնանկության մասին» ՀՀ օրենքում առկա դատավարական նորմերի հարաբերակցությունը, դրանց կիրառման առանձնահատկությունները ներկայացնելու համար:

Դասընթացը ներառում է՝

- քաղաքացիական գործը դատաքննության նախապատրաստելու հիմնահարցերը,
- ապացուցման հիմնահարցերը, ապացուցման բեռի բաշխման կանոնները և ապացույցների գնահատման հմտությունները, ապացույցների թույլատրելիությունը մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի համատեքստում, դատարանի դերը նյութաիրավական փաստերը վեր հանելու գործընթացում, վկայի հարցաքննության առանձնահատկությունները,
- գործերի առարկայական ընդդատության որոշումը,
- նյութական և դատավարական իրավունքի արդի խնդիրներ,
- գույքն արգելանքից հանելու պահանջները,
- դատաքննության հիմնահարցերը,
- դատավարական ժամկետներն ու դրանց կառավարման մեթոդները,

- դատական ծախսերի (ներառյալ այլ ծախսերի) տեսակները, բաշխման առանձնահատկությունները,
- հայցի ապահովման, հակընդդեմ ապահովման և նախնական ապահովման կիրառման առանձնահատկությունները,
- հակընդդեմ հայցը և դրա չներկայացման դատավարական հետևանքները,
- պարզեցված ընթացակարգով գործերի քննության առանձնահատկությունները,
- դատավարության վարման, դատաքննության անցկացման տակտիկայի և տեխնիկայի որոշ հարցեր,
- դատավարության նորմերի կիրառման հետ կապված այլ հիմնահարցեր,
- ցուցմունքի ճշմարտացիության ստուգման հնարքներ,
- ՀՀ քաղ. դատ. օր.-ի 203-րդ հոդվածի գործնական կիրառումն ապացուցման գործընթացում (ՀՀ քաղ. դատ. օր.-ի 62-րդ և 203-րդ հոդվածների հարաբերակցությունը),
- կատարողական վարույթի առանձնահատկությունը քաղաքացիական դատավարությունում,
- ՀՀ քաղաքացիական դատավարության մասին օրենսգրքում և Սնանկության մասին ՀՀ օրենքում առկա դատավարական նորմերի հարաբերակցությունը,
- վտարման հայցապահանջների քննության առանձնահատկությունները վինդիկացիոն և նեգատոր հայցերի տարանջատման տիրույթում,
- ԱՊՊԱ գործընթացի շրջանակներում կրկնկի փորձաքննության եզրակացության վիճարկման դատական պրակտիկայի հակասությունները և զարգացման տենդենցները,
- նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վարույթի առանձնահատկությունները,
- դատական հանձնարարությունները, օտարերկրյա դատական ակտերը:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական և սնանկության գործեր քննող դատավորների համար:

20. J-BN-003-26., J-CV-002-26. Կորպորատիվ իրավունքի արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է կորպորատիվ իրավունքում առկա հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանք կենսագործելու կարողությունների ու գործնական հմտությունների կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է կորպորատիվ կառավարման սկզբունքների, կորպորատիվ իրավունքի սուբյեկտների, դրանց ստեղծման, վերակազմակերպման, լուծարման, գործունեության կազմակերպման, մասնակիցների իրավունքների և պարտականությունների, արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման, սնանկության վարույթում կորպորատիվ վեճերի քննության առանձնահատկությունների, իրավաբանական անձի գործադիր մարմնի աշխատանքից ազատման հարաբերություններում կորպորատիվ և աշխատանքային վեճերի տարանջատման և այլ հիմնահարցեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական և սնանկության գործեր քննող դատավորների համար:

21. J-BN-004-26., J-CV-001-26. Պարտավորական հարաբերությունների արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է պարտավորական իրավունքի վերաբերյալ նոր իրավական դիրքորոշումներն ունկնդիրներին մատուցելու, պարտավորական իրավահարաբերությունները կարգավորող իրավանորմերի կիրառման գործնական հմտությունների կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է պայմանագրային և քվազի-պայմանագրային (անհիմն հարստացման, առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողությունների) պարտավորությունների, դրանք խախտելու համար պատասխանատվության, պարտավորությունների կատարման հայցապահանջների քննության առանձնահատկությունները՝ ըստ դրանց ծագման հիմքերի և դրանց տարանջատման անհրաժեշտության (պարտավորագրի ֆենոմեն), արտապայմանագրային (դելիկտային), մասնավորապես, ոչ նյութական վնասի հատուցման, քաղաքացու կյանքին, առողջությանը պատճառված վնասը հատուցելու ինստիտուտի առանձնահատկությունների, ապահովագրական իրավահարաբերությունների, ապահովված իրավունքի վերաբերյալ հիմնահարցերը, պարտավորությունների խախտման համար պատասխանատվության (վնասի և տուժանքի հարաբերակցություն, օրինական և պայմանագրային տուժանքի հարաբերակցություն՝ ներառյալ ՔՕ 411-րդ հոդվածի կիրառման տեսանկյունից, անհաղթահարելի ուժը՝ որպես պատասխանատվությունը բացառող հանգամանք), պարտավորական իրավունքի ինստիտուտում քաղաքացիաիրավական պատասխանատվության այլ ձևերը, ինչպես նաև վերը նշված հիմնահարցերի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական և սնանկության գործեր քննող դատավորների համար:

22. J-BN-005-26. Բանկային իրավունքի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է բանկային իրավունքի վերաբերյալ նոր իրավական դիրքորոշումներն ունկնդիրներին մատուցելու, բանկային իրավահարաբերությունները կարգավորող իրավանորմերի կիրառման գործնական հմտությունները կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացն անդրադառնում է բանկային գործունեության իրավական կարգավորմանը ՀՀ-ում, բանկային գործունեություն իրականացնող մարմինների իրավական վիճակի առանձնահատկություններին, բանկային օրենսդրության խախտումների համար սահմանված պատասխանատվությանը, դրամի շրջանառության և անկանխիկ հաշվարկների, երրորդ անձանց կատարված փոխանցումների և գույքի օտարման, ինչպես նաև արժութային և արտարժութային բանկային գործառույթների իրավական կարգավորման հիմնախնդիրներին:

Դասընթացը նախատեսված է սնանկության գործեր քննող դատավորների համար:

23. J-BN-006-26. Սնանկության գործերով միջազգային պրակտիկա, նախադեպային որոշումների ուսումնասիրություն

Դասընթացն անհրաժեշտ է սնանկության գործերով միջազգային և օտարերկրյա պրակտիկայի, ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների, եվրոպական և ամերիկյան դատավորների մոտեցումների վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները, դրանց կիրառման գործնական հմտությունները զարգացնելու, կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է սնանկության ոլորտում Եվրոպական կոնվեցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հարցերը:

Դասընթացը նախատեսված է սնանկության գործեր քննող դատավորների համար:

24. J-BN-007-26. ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումները սնանկության գործերով

Դասընթացի շրջանակներում անդրադարձ է կատարվում սնանկության ոլորտում ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների կողմից կայացված որոշումների քննարկմանն ու ներկայացմանը:

Դասընթացի շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրության առարկա դարձնել ՀՀ Վճռաբեկ և Սահմանադրական դատարանների որոշումների կիրառման առանձնահատկությունները սնանկության գործերով, սնանկության հետ առնչվող օրենսդրության վերաբերյալ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների մոտեցումները:

Դասընթացի շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրության առարկա դարձնել ՀՀ Վճռաբեկ և Սահմանադրական դատարանների որոշումների կիրառման առանձնահատկությունները, գործերի քննության լավագույն փորձը, օրենքի բացը լրացնելը՝ օրենքով չկարգավորված խնդիրների վերաբերյալ որոշումներ կայացնելու առանձնահատկությունները, դատական պրակտիկայի ուսումնասիրությունը սնանկության գործերով, սնանկության հետ առնչվող օրենսդրության վերաբերյալ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների մոտեցումները:

Դասընթացը նախատեսված է սնանկության գործեր քննող դատավորների համար:

25. J-BN-007-26. Սնանկության գործի շրջանակներում քննվող քաղաքացիական գործերի առանձնահատկությունները.

Դասընթացի շրջանակներում անդրադարձ է կատարվում սնանկության գործի շրջանակներում քննվող քաղաքացիական գործերում առկա օրենսդրական և այլ բնույթի խնդիրներին, քաղաքացիական դատավարության նորմերի կիրառման առանձնահատկություններին, քննելու հիմքերին, այդ թվում՝ ֆինանսական առողջացման մեխանիզմների արդյունավետ կիրառման, ինչպես նաև պարտապանի գույքի գույքագրման, գույքի գնահատման և աճուրդների կազմակերպման և դրանց հաղթահարման հիմնահարցերին, որոնք կարող են ուղենիշային լինել իրավակիրառ պրակտիկայի, ինչպես նաև առանձին քաղաքացիական գործերի ինստիտուտի հետագա օրենսդրական զարգացման համար:

Դասընթացը նախատեսված է սնանկության գործեր քննող դատավորների համար:

26. J-CV-003-26. Աշխատանքային իրավունքի արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է աշխատանքային իրավահարաբերությունների առանձնահատկությունների վերաբերյալ դատավորների գիտելիքներն ընդլայնելու, տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու, ինչպես նաև այդ կապակցությամբ իրավական նոր դիրքորոշումները ունկնդիրներին մատուցելու համար:

Այն ներառում է աշխատանքային իրավահարաբերությունների ծագման, դադարման, աշխատանքային իրավահարաբերությունների կողմերի իրավունքների պաշտպանության, պատասխանատվության, աշխատանքային վեճերի քննության առանձնահատկություններ, աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողության և վերահսկողության հարցերը, դրանց վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, միջազգային մասնավոր իրավունքի հիմնախնդիրները, օտարերկրյա իրավունքի նորմերի կիրառման իրավական և փաստական մեխանիզմները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

27. J-CV-004-26. Քաղաքացիական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ իրավական նոր դիրքորոշումների վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքները, դրանց կիրառման գործնական հմտությունները զարգացնելու, կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է քաղաքացիական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվեցիայով երաշխավորված իրավունքների, այդ թվում՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հարցերը, այդ թվում՝

- արդար դատաքննության իրավունքի իրավական բնույթը,
- դատարանի իրավունքը,
- օրենքի հիման վրա ստեղծված անկախ տրիբունալի էությունը,
- անկողմնակալ տրիբունալի էությունը,
- ՄԻԵԿ 6-րդ հոդվածի վարույթային տարրերը՝ արդարացի լսումները, մրցակցության սկզբունքը, «Զենքերի» հավասարությունը, հրապարակային քննության, ողջամիտ ժամկետի սկզբունքները,
- Հայաստանի Հանրապետության վերաբերյալ ՄԻԵԴ-ի վճիռները,
- Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների միջամտության սահմանները, ստուգման չափորոշիչները, մեկնաբանման առանձնահատկությունները ըստ ՄԻԵԴ լավագույն պրակտիկայի,
- ՄԻԵԴ նախադեպային իրավունքը Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ,13-րդ, 14-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների վերաբերյալ,
- մտավոր սեփականության իրավունքի կարգավորման ոլորտում գործող միջազգային իրավական ակտերը:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

28. J-CV-006-26. Ոչ նյութական վնասի հատուցման հիմնախնդիրներ

Դասընթացն անհրաժեշտ է ոչ նյութական վնասի հատուցման առանձնահատկությունների, ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ միջազգային փորձի և իրավունքի զարգացման վերաբերայլ անհրաժեշտ գիտելիքների և պրակտիկ փորձի համադրմամբ Ունկնդիրների գործնական հմտությունները կատարելագործելու համար

Դասընթացը ներառում է պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի, վիրավորանքի և զրպարտության, խոշտանգումից տուժած անձանց, ինչպես նաև ոլորտում առկա կոնվենցիոնալ մեխանիզմներն առավել համակողմանի ուսումնասիրելու, Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման կարգի և պայմանների, քաղաքացու կյանքին, առողջությանը պատճառված վնասը հատուցելու ինստիտուտի առանձնահատկությունների վերաբերյալ հարցերը:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

29. J-CV-007-26. ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումները քաղաքացիական գործերով

Դասընթացն անդրադառնում է քաղաքացիական իրավունքի և դատավարության ոլորտում ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների կողմից կայացված ուղենիշային որոշումների քննարկմանն ու ներկայացմանը:

Դասընթացի շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրության առարկա դարձնել ՀՀ Վճռաբեկ և Սահմանադրական դատարանների որոշումների կիրառման առանձնահատկությունները, գործերի քննության լավագույն փորձը, օրենքի բացը լրացնելը՝ օրենքով չկարգավորված խնդիրների վերաբերյալ որոշումներ կայացնելու առանձնահատկությունները, դատական պրակտիկայի ուսումնասիրությունը:

Հատուկ քննարկման առարկա կդառնան քաղաքացիաիրավական գործարքների վավերության պայմանների, սեփականության իրավունքի ծագման, փոփոխման և դադարման առանձնահատկությունների, սեփականության իրավունքի սահմանափակման պայմանների, հայցի ապահովման միջոցների կիրառման շրջանակներում դրանց գործնական կիրառելիության, հեղինակային և հարակից իրավունքների ծագման, անհիմն հարստացման, հանրային ծառայությունից ազատելու հետ կապված աշխատանքային վեճերի քննության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

30. J-CV-008-26. ՀՀ քաղաքացիական իրավունքի արդի հարցեր

Դասընթացի շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրության առարկա դարձնել քաղաքացիական իրավունքի առավել արդիական հիմնախնդիրները, քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունները, որոնք կարող են պայմանավորված լինել ինչպես նոր իրավական ինստիտուտների պրակտիկ կիրառման ընթացքում ի հայտ եկող խնդրահարույց հարցերով, այնպես էլ իրավական նորմերի՝ գործնականում կիրառմամբ:

Դասընթացի շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրել՝

- քաղաքացիական իրավահարաբերությունների ծագման և դադարման հիմնահարցերը,
- քաղաքացիական իրավահարաբերությունների կողմերի իրավունքների պաշտպանության և պատասխանատվության հիմնահարցերը,
- հայցային վաղեմության ինստիտուտի կիրառման առանձնահատկությունները քաղաքացիական հարաբերություններում,
- սեփականության և այլ իրային իրավունքների առավել արդիական հիմնախնդիրները,
- քաղաքացիական գործունակությունն ու իրավունակությունը,
- գույքի առանձին տեսակների ժառանգման առանձնահատկությունները, ժառանգության պարտադիր բաժնի որոշման առանձնահատկությունները, ժառանգության ընդունման և դրանից հրաժարման առանձնահատկությունները (տրանսմիսիա, ընդունումը ներկայացման իրավունքով),
- մտավոր սեփականության օբյեկտները և դրանց իրավական պաշտպանության առանձնահատկությունները, հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանությունը,
- ոչ նյութական վնասի, սահմանափակ իրային իրավունքի, հարևանային իրավունքի, սերվիտուտի, ապահովված իրավունքի (գրավ), կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի, տույժերի հաշվարկի և այլ հիմնախնդիրների վերաբերյալ իրավական կարգավորումները,
- ապահովագրության ինստիտուտի վերաբերյալ արդի հիմնախնդիրները,
- պարտավորական իրավունքի ինստիտուտում քաղաքացիաիրավական պատասխանատվության առանձնահատկությունները,
- վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունները,
- ձեռքբերման վաղեմության կիրառման առանձնահատկություններն ըստ քաղաքացիական և հողային օրենսդրության,

– նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վարույթի առանձնահատկությունները,
– հանրության գերակա շահի ապահովման նպատակով սեփականության իրավունքի՝ դատական կարգով օտարման հիմնախնդիրները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

31. J-CV-009-26. Հատուկ հայցային վարույթի և հատուկ վարույթներով գործերի քննության առանձնահատկությունները

Դասընթացն անհրաժեշտ է հատուկ վարույթի և հատուկ հայցային վարույթներով գործերի առանձին տեսակների առանձնահատկությունների վերաբերյալ ունկնդիրների գիտելիքներն ընդլայնելու, դրանց կիրառման հմտությունները կատարելագործելու, ինչպես նաև այդ կապակցությամբ իրավական նոր դիրքորոշումները ունկնդիրներին մատուցելու համար:

Դասընթացը ներառում է երեխաների տեսակցության և բնակության վայրի որոշման հայցերով հայցի ապահովման կիրառման առանձնահատկությունները, երեխային ՀՀ-ից դուրս տանելու սահմանափակումների կիրառման, տեսակապով և էլեկտրոնային այլ եղանակներով տեսակցությունների ապահովման հիմնախնդիրները, հատուկ և հատուկ հայցային վարույթների առանձին տեսակների, այդ թվում՝ երեխայի որդեգրման, երեխայի լսված լինելու, ծնողական իրավունքներից զրկելու, քաղաքացուն բժշկական հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու, իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման, հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի վճռի վերանայման, առանձին աշխատանքային վեճերով, կորպորատիվ վեճերով, խմբային հայցի հիման վրա քննվող գործերով, Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ, ընտանեկան գործերով վարույթների առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

32. J-CV-010-26. Հաշտարարություն և Արբիտրաժ

Դասընթացն անհրաժեշտ է հաշտարարության և արբիտրաժի ինստիտուտների ոլորտում առկա հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանք կենսագործելու կարողությունների ու գործնական հմտությունների կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է՝
– հաշտարարության ինստիտուտի ընդհանուր բնութագիրը,
– հաշտարարության վերաբերյալ համաձայնությունն ու կիրառումը,
– հաշտարարի նշանակումը, հաշտարարության հետ կապված ծախսերը,
– հաշտարարության շրջանակը, ժամկետները և ավարտը,
– արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը,
– կոնֆլիկտոլոգիա,
– հաշտեցման հմտություններ,
– առևտրային արբիտրաժների ակտերի ճանաչման ու կատարման վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրները, հաշտարարության և արբիտրաժի վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը և այլ հիմնահարցեր:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

33. J-CV-011-26. Պետական գնումների գործընթացի բողոքարկման իրավական կարգավորումները

Դասընթացն ուղղված է պետական գնումների վերաբերյալ վեճերի քննության առանձնահատկությունների, «Գնումների վեճ» որակման խնդիրների և դատական պրակտիկայի հակասությունների և պետական տուրքի որոշման տեսանկյունից դրանց կարևորության, գնումների բողոքարկման համակարգի վերաբերյալ համապարփակ գիտելիքի ապահովմանը: Հաշվի առնելով վերջին շրջանում կատարված օրենսդրական փոփոխությունները, որոնց արդյունքում գնումների հետ կապված բողոքները քննվելու են միայն դատական կարգով, ինչը նշանակում է գնումների բողոքարկման արտադատական համակարգի վերացում՝ գործող կարգավորումները առաջացնում են բազմաթիվ հարցեր (հայցվորի դատավարական իրավունքների առերևույթ գերակայությունը պատասխանողի դատավարական իրավունքների հարաբերությամբ), որոնց պարզաբանմանն էլ ուղղված է նշված դասընթացի մշակումը:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

34. J-CV-012-26. Ընտանեկան իրավունքի արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է ընտանեկան իրավունքի ոլորտում առկա հիմնահարցերի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանք կենսագործելու կարողությունների ու գործնական հմտությունների կատարելագործման համար:

Դասընթացի ընթացքում քննարկման առարկա կդառնան ամուսնության դադարման, ամուսնության անվավերություն, ալիմենտային պարտավորությունների վճարման և բռնագանձման կարգի, ծնողական իրավունքներից զրկելու, ամուսինների ընդհանուր համատեղ սեփականության ծագման հիմքերի որոշման և դրանց կիրառման հիմնախնդիրները, երեխաների տեսակցության և բնակության վայրի որոշման հայցերի քննության հիմնախնդիրները՝ ծնողների՝ տարբեր երկրներում ապրելու պայմաններում, խնամակալության և հոգաբարձության մարմինների մասնակցության հիմնախնդիրները, կոնվենցիաներով նախատեսված ընտանեկան վեճերի քննության և ընտանեկան իրավունքի այլ ինստիտուտներսի վերաբերյալ որոշ հիմնահարցեր:

Դասընթացը նախատեսված դատավորների համար:

35. J-CV-013-26. Դատական գործերի դասակարգում, գործերի առաջնահերթության որոշում, դատական նիստերի նախապատրաստում

Դասընթացն ուղղված է դատական գործերի դասակարգման, գործերի առաջնահերթության որոշման, դատական նիստերի նախապատրաստման վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ընդլայնմանն ու հմտությունների կատարելագործմանը:

Դասընթացի շրջանակներում քննարկման առարկա կդառնան դատական գործերի դասակարգման և գործերի առաջնահերթության որոշման, ծանրաբեռնվածության արդյունավետ կառավարման, կոլեգիալ դատական կազմերի աշխատանքի արդյունավետ կազմակերպման գործնական հմտությունները, դատական գործերի դասակարգման և գործերի առաջնահերթության որոշման մեթոդներն ու մեխանիզմները, միջազգային լավագույն փորձի և գործերի քննության և լուծման ողջամիտ ժամկետների պահպանման հիմնահարցերը, դատական նիստերի նախապատրաստմանն ուղղված գործողություններն ու դրանց առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

36. J-AD-001-26. ՀՀ վարչական վարույթի արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է վարչական վարույթում առկա արդի հարցերի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու, ինչպես նաև տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու համար:

Դասընթացը ներառում է՝

- վարչական ակտի պարտադիր հատկանիշները,
- վարչական վարույթի մասնակիցների իրավունքների պաշտպանության հիմնահարցերը,
- վարչական վարույթի և հատուկ նորմերի հարաբերակցության հարցերը,
- գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վարույթի արդի հարցերը,
- հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների ստուգման առանձնահատկությունները,
- կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվելուց հետո կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերելու առանձնահատկությունները,
- վարչարարությամբ պատճառված վնասն ու դրա հատուցման առանձնահատկությունները,

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

37. J-AD-002-26. ՀՀ վարչական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է վարչական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի վերաբերյալ դատավորների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու, ինչպես նաև տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու համար:

Դասընթացը ներառում է՝

- հայցադիմումը վարույթ ընդունելու կանոնների առանձնահատկությունները՝ շահագրգիռ անձի կարգավիճակից ելնելով,
- գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում ծագող հարցերը,
- դատաքննության հիմնահարցերը,
- ի պաշտոնե գործերի քննության սահմանների առանձնահատկությունները վարչական դատավարությունում,
- մատնանշումը՝ որպես դատավարական պարտականություն և դրա չապահովման հետևանքները (քննարկելով նաև կողմից հրաժարումը և դրա հետևանքների հայցը, եթե դատարանը պատշաճ ապահովել է այդ մատնանշումը),
- ՀՀ վարչական դատարան հայց ներկայացնելու համար նախատեսված պետական տուրքի հաշվարկման առանձնահատկությունները,
- վարչական գործերի քննության ընթացքում առաջացած գործնական խնդիրների վերաբերյալ քննարկումը,
- դատախազության՝ վարչական գործերով հայց ներկայացնելու իրավասության սահմաններն ու այդպիսի գործերի քննության առանձնահատկությունները,
- վկաների հարցաքննության առանձնահատկությունները,
- ցուցմունքի ճշմարտացիության ստուգման հնարքները,
- ապացուցման հիմնահարցերը,
- ի պաշտոնե քննության և կողմերի՝ ապացուցման բեռը կրելու սահմանները՝ դատարանի՝ գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու պարտականության համատեքստում,
- հայցի ապահովման հիմնահարցերը,

- միջանկյալ դատական ակտերի կայացման և դրանց բողոքարկման առանձնահատկությունները,
- հայցերի առանձին տեսակների, այդ թվում՝ այլևս իրավաբանական ուժ չունեցող վարչական ակտի կամ սպառված գործողության կամ անգործության ոչ իրավաչափ լինելը ճանաչելու հայցի ընդունելիության և քննության առանձնահատկությունները՝ շահագրգիռ անձի կարգավիճակից ելնելով, վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի կողմից վիճարկման հայց ներկայացնելու դեպքում դատավարական ժամկետների հաշվարկման առանձնահատկությունները,
- վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի կողմից վիճարկման հայց ներկայացնելու դեպքում դատավարական ժամկետների հաշվարկման առանձնահատկությունները,
- այլևս իրավաբանական ուժ չունեցող վարչական ակտի կամ սպառված գործողության կամ անգործության ոչ իրավաչափ լինելը ճանաչելու հայցի ընդունելիության և քննության առանձնահատկությունները,
- իրավահարաբերության բացակայության կամ առկայության ճանաչման պահանջով գործերի առանձնահատկությունները,
- կենսաթոշակային իրավահարաբերություններից բխող վեճերի՝ դատական կարգով լուծման առանձնահատկությունները,
- նոր երևան եկած և նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայումը,
- հողային վեճերի առանձնահատկությունները,
- հարկադիր կատարումն ապահովող ծառայության որոշումների և գործողությունների վիճարկման և դատական ակտերի հարկադիր կատարման վարույթի հիմնահարցերը,
- դատական ծախսերը, ներառյալ դատարանի կողմից անհրաժեշտ ճանաչված «այլ ծախսերի» տեսակները,
- վերաքննիչ և վճռաբեկ վարույթների հիմնահարցերը,
- 2025 թ. մայիսի 30-ին ուժի մեջ մտած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի կիրարկման առանձնահատկություններն ու դրանց վերաբերյալ վերլուծություններն ու մեկնաբանությունները:
- Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

38. J-AD-003-26. Հատուկ վարույթի գործերի քննության առանձնահատկությունները

Դասընթացն անհրաժեշտ է հատուկ վարույթների առանձին տեսակների առանձնահատկությունների վերաբերյալ դատավորների գիտելիքներն ընդլայնելու, դրանց կիրառման գործնական հմտությունները կատարելագործելու, ինչպես նաև այդ կապակցությամբ իրավական նոր դիրքորոշումներն ունկնդիրներին մատուցելու համար: Այն ներառում է՝

- հատուկ վարույթների առանձնահատկությունները վարչական դատավարությունում,
- հատուկ վարույթների առանձին տեսակների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկությունները,
- նորմատիվ իրավական ակլտերի իրավաչափությունը վիճարկելու վարույթի հիմնահարցերը,
- ընտրական վեճերի, ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկությունները,
- դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վարույթի հիմնահարցերը,
- անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկությունները,

- հասարակական կազմակերպության ներկայացրած հայցով գործերի քննության վարույթի առանձնահատկությունները,
- լիցենզիայի հետ կապված լիազոր մարմնի որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկությունները,
- նոտարական գործողությունների (ներառյալ՝ ժառանգության վկայագիր տրամադրելուն ուղղված նոտարական գործողությունների) վիճարկման առանձնահատկությունները,
- կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունները փաստի հիմքով վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկությունները,
- «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված անհետաձգելի միջամտության որոշման բողոքարկման վարույթի առանձնահատկությունները,
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրավիճակային հայտարարագիր ներկայացվելու որոշման իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկությունները,
- կարանտինի պայմաններում օրենքով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում ընդունված ակտերի իրավաչափության վիճարկման գործերի վարույթի առանձնահատկությունները,
- Հայաստանի Հանրապետության պետական սահմանն ապօրինի հատած կամ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդման կամ օտարերկրյա պետությանը հանձնման ենթակա օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից փախստականի կարգավիճակ կամ ապաստան տրամադրելու հայցով իրավասու մարմինների կողմից կայացված անբարենպաստ վարչական ակտը վիճարկելու կամ բարենպաստ վարչական ակտ կայացնելու վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկությունները, փախստականի կարգավիճակի որոշման և ապաստանի տրամադրման դատական վարույթների առանձնահատկությունները,
- շրջակա միջավայրի վրա ազդող ակտերի վիճարկումը,
- հատուկ վարույթի գործերի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

39. J-AD-004-26. Տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնահարցեր

Դասընթացն անդրադառնում է հակամրցակցային համաձայնություններին, մենաշնորհին կամ գերիշխող դիրքին, համակենտրոնացմանը, անբարեխիղճ մրցակցությանը, պետական օժանդակությանը և իրավական ակտերի ու ստորագրված պայմանագրերի փորձաքննությանը, պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողություններին, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական մարմնին, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը խախտելու համար պատասխանատվությանը, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության կիրառման պրակտիկայում հանդիպող խնդիրների ուսումնասիրությանը և Եվրասիական տնտեսական միության անդամակցության համատեքստում մաքսային կարգավորման և մաքսային իրավահարաբերություններից բխող վեճերի քննության առանձնահատկություններին:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

40. J-AD-005-26. ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումները վարչական գործերով

Դասընթացն անդրադառնում է վարչական իրավունքի և վարչական դատավարության ոլորտում ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների որոշումներով արտահայտած դիրքորոշումների քննարկմանն ու ներկայացմանը:

Դասընթացի շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրության առարկա դարձնել վարչական իրավունքի և վարչական դատավարության վերաբերյալ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների որոշումները, դրանց կիրառման առանձնահատկությունները, գործերի քննության լավագույն փորձը, օրենքի բացը լրացնելը՝ օրենքով չկարգավորված խնդիրների վերաբերյալ որոշումներ կայացնելու առանձնահատկությունները, դատական պրակտիկայի ուսումնասիրությունը, ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական պալատի կողմից ընդունված նախադեպային որոշումների համատեքստում նախկինում ընդունված որոշումների կիրառելիության սահմանները:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

41. J-AD-006-26. Վարչական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է ՄԻԵԴ իրավական նոր դիրքորոշումների վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքները, դրանց կիրառման գործնական հմտությունները զարգացնելու, կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

- վարչական իրավունքի և դատավարության ոլորտում Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ արդի նախադեպային իրավունքը և ՀՀ նկատմամբ դրա կիրառման հարցերը,
- Հայաստանի Հանրապետության վերաբերյալ ՄԻԵԴ-ի վճիռները,
- Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների միջամտության սահմանները, ստուգման չափորոշիչները, մեկնաբանման առանձնահատկությունները ըստ ՄԻԵԴ լավագույն պրակտիկայի,
- ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը (1-ին արձանագրության 1-ին հոդված, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներ),
- Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումներն ու դրանց կիրառման հարցերը,
- արդար դատաքննության իրավունքի իրավական բնույթը, օրենքի հիման վրա ստեղծված անկախ տրիբունալի էությունը,
- ՄԻԵԿ 6-րդ հոդվածի վարութային տարրերը՝ արդարացի լսումները, մրցակցության սկզբունքը, հրապարակային քննության, ողջամիտ ժամկետի սկզբունքը:

Դասընթացը, մասնավորապես, ներառում է վերոհիշյալ հիմնահարցերի վերաբերյալ վերջին տարիների ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

42. J-AD-007-26. Հարկային և մաքսային իրավունքի արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է հարկային և մաքսային իրավունքի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու, ինչպես նաև տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու համար: Դրա շրջանակներում քննարկման առարկա կդառնան հարկային և մաքսային իրավահարաբերություններ-

ից բխող վեճերի առանձնահակությունները,ընտրահարկային օրենսդրության փոփոխություններն ու կիրառման առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

43. J-AD-008-26. Դատական գործերի դասակարգում, գործերի առաջնահերթության որոշում, դատական նիստերի նախապատրաստում

Դասընթացն ուղղված է դատական գործերի դասակարգման, գործերի առաջնահերթության որոշման, դատական նիստերի նախապատրաստման վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ընդլայնմանն ու հմտությունների կատարելագործմանը:

Դասընթացի շրջանակներում քննարկման առարկա կդառնան դատական գործերի դասակարգման և գործերի առաջնահերթության որոշման, ծանրաբեռնվածության արդյունավետ կառավարման, կոլեգիալ դատական կազմերի աշխատանքի արդյունավետ կազմակերպման գործնական հմտությունները, դատական գործերի դասակարգման և գործերի առաջնահերթության որոշման մեթոդներն ու մեխանիզմները, միջազգային լավագույն փորձի և գործերի քննության և լուծման ողջամիտ ժամկետների պահպանման հիմնահարցերը, դատական նիստերի նախապատրաստմանն ուղղված գործողություններն ու դրանց առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է վարչական գործեր քննող դատավորների համար:

44. J-CR-001-26. Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները, միջազգային դատարանների իրավակիրառ պրակտիկան և միջազգային համագործակցությունը

Դասընթացի նպատակն է ՄԻԵԴ իրավական նոր դիրքորոշումների, քրեական գործերով միջազգային դատարանների պրակտիկայի և նրանց հետ համագործակցության վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ընդլայնումը, դրանց կիրառման գործնական հմտությունների զարգացումը և կատարելագործումը:

Դասընթացը ներառում է՝

- Միջազգային քրեական դատարանի պրակտիկայի, քրեադատավարական նոր դրույթների վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը,
- միջազգային դատարանների և ներպետական դատական ատյանների համագործակցության արդի հարցերը,
- ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի կիրառման գործնական հարցերը, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության՝ մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերի կիրառման առանձնահատկությունները,
- ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի պրակտիկան, նրա կողմից գործերի քննության առանձնահատկությունները,
- ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բովանդակությունը (այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերը, դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքներն ու դրանց ներպետական օրենսդրությունում կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի հարցերը, Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան և այլն):

- քրեական գործերով ՄԻԵԴ-ի իրավակիրառ պրակտիկայի զարգացումները, ՀՀ վերաբերյալ ՄԻԵԴ վերջին որոշումներով ձևավորված նոր իրավական դիրքորոշումները, վճիռները, ՀՀ նկատմամբ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման հարցերը,
- Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների միջամտության սահմանները, ստուգման չափորոշիչները, մեկնաբանման առանձնահատկություններն՝ ըստ ՄԻԵԴ լավագույն պրակտիկայի,
- ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով (1-ին արձանագրության 1-ին հոդված, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներ),

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

45. J-CR-002-26. ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների դիրքորոշումները քրեական գործերով

Դասընթացի նպատակն է քրեական գործերով ՀՀ վճռաբեկ և Սահմանադրական դատարանների դիրքորոշումների վերաբերյալ ունկնդիրների գիտելիքների ընդլայնումը:

Դասընթացը ներառում է՝

- քրեական գործերով Վճռաբեկ դատարանի ուղենիշայի որոշումները, օրենքի բացը լրացնելը՝ օրենքով չկարգավորված խնդիրների վերաբերյալ որոշումներ կայացնելու առանձնահատկությունները,
- ՀՀ քրեական դատավարության մինչդատական վարույթին վերաբերող առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնահարցերը,
- քրեական դատավարության ոլորտում ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

46. J-CR-003-26. ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է քրեական դատավարության ոլորտում նոր իրավական զարգացումների, դրանց վերաբերյալ միջազգային փորձի, վիճահարույց հարցերի, դրանք գործնականում կիրառելու, ինչպես նաև քննչական գործողությունների կատարման և դրանց նկատմամբ դատական վերահսկողության ապահովման կարողությունների կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է ՀՀ քրեական դատավարության օրենսդրության արդի հիմնահարցերը, այդ թվում՝

- տեխնիկական միջոցների կիրառման կարգի վերաբերյալ նոր իրավակարգավորումները, ձերբակալման իրավաչափության բողոքարկման ինստիտուտը, մասնավոր գանգատի գործերի շրջանակի փոփոխությունը, մասնավոր մեղադրանքի վարույթի առանձնահատկությունները,
- մեղադրյալի բացակայությամբ իրականացվող, համաձայնեցման և համագործակցության վարույթները քրեական դատավարությունում,
- պրոբացիոն ծառայության կողմից դատարան ներկայացված միջնորդությունների քննության հետ կապված հիմնահարցերը,
- ապացույցների գնահատման հմտությունները, փաստերի հաստատում, ապացուցման կանխավարկածներ,
- դատական ակտերի կատարման փուլում դատական վարույթի հիմնահարցերը,
- արդար դատաքննության իրավունքի ապահովման արդի հիմնախնդիրները,

- քննչական գործողությունների կատարման ընթացքում ծագող գործնական հիմնահարցերը, առանձին քննչական գործողությունների կատարման դատավարական և քրեագիտական առանձնահատկությունները,
- դատավարական հարկադրանքի միջոցները,
- օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ դատական վերահսկողության հիմնախնդիրները,
- օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների արդյունքում ստացված ապացույցների թույլատրելիությունը, ապացույցների և ապացուցման գործընթացի, օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներն ապացուցման գործընթացում օգտագործելու իրավական կարգավորման խնդիրները,
- պետական, նոտարական և բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ ստանալու դատավարական կարգը, պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ կապված քրեական գործերի քննության առանձնահատկությունները,
- դատական երաշխիքները մինչդատական վարույթի նկատմամբ,
- գույքային հայցի լուծման և վարութային ծախսերի վերականգնման հիմնախնդիրները քրեական դատավարությունում: Տուժողի գույքային հայցի ապահովումը քրեական դատավարությունում
- քրեական դատավարությունում տուժողի (զոհի) իրավական կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները, նրանց համար ընթացակարգային երաշխիքները,
- տուժողի պաշտպանությունը և նրանց աջակցության տրամադրումը (երկրորդային վիկտիմիզացման կանխարգելում, պաշտպանություն ապաբեկումից, վրեժխնդրությունից և այլն),
- տուժողի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի ապահովումը,
- ընթացակարգային հարմարությունները խոցելի տուժողների համար (խոցելի տուժողների բացահայտում, երեխաներ, հաշմանդամություն ունեցող տուժողներ, սեռական հանցագործությունների, մարդկանց թրաֆիկինգի տուժողներ և այլն),
- քրեական դատավարությունում հաղորդակցության ընդհանուր տեսանկյունները (վերբալ և ոչ վերբալ, բանավոր և գրավոր, լսող կողմի ընկալմանը նպաստող մեթոդներ, արդյունավետ ունկնդրում),
- հաղորդակցությունը զանգվածային լրատվամիջոցների, վկաների, տուժողների, մեղադրյալի, անչափահասների, փոքրամասնությունների ներկայացուցիչների, փաստաբանների և դատավարության մյուս մասնակիցների հետ (ինչպես հարցեր տալ, ինչպես ստանալ արժանահավատ տեղեկություններ և այլն), միջմշակութային հաղորդակցությունը,
- բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի առանձնահատկությունները՝ ըստ գործող քրեական դատավարության օրենսգրքի,
- գաղտնալսման թույլտվությունը,
- դատալսումներում (նախնական, հիմնական, լրացուցիչ) հաճախ առաջացող կիրառման խնդիրները,
- հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) հիմնախնդիրները քրեական դատավարությունում,
- «վկա» եզրույթի ինքնուրույն նշանակությունը, վկաներին հարցաքննելու իրավունքը, վկաների հարցաքննության առանձնահատկությունները,
- հարցաքննության հատուկ կարգի ապահովման և իրականացման առանձնահատկությունները,

- ընդհանուր սկզբունքներ, վկայի ներկայությունն ապահովելու համար ողջամիտ ջանքեր գործադրելու պարտավորությունը, վկային լսելը մերժելու հիմնավորման պարտավորությունը, վկաների՝ դատարանում բանավոր ձևով չներկայացված ցուցմունքների վրա հիմնվելը, անանուն վկաները, վկաներին իրենց ցուցմունքների դիմաց առաջարկվող առավելությունները,ուրիշի խոսքի վրա հիմնված ցուցմունքները, ցուցմունքի ճշմարտացիության ստուգման հնարքները,
- պաշտպանության համար անձանց որպես վկա կանչելու իրավունքը,
- դատական վարույթներում գրավոր ընթացակարգերի կիրառման հետ կապված գործնական խնդիրները,
- համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթը,
- դատական վարույթը դատական ակտերի կատարման փուլում,
- իրավական փոխօգնության բնագավառում գործնականում առաջացող արդի հիմնախնդիրների վերաբերյալ հարցերը՝ «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» օրենքի նախագծի համատեքստում:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

47. J-CR-004-26. Պատիժ նշանակելու, կատարելու, պատժից ազատելու կամ այն փոխարինելու նյութաիրավական և դատավարական հիմնախնդիրներ

Դասընթացը պայմանավորված է պատժողական քաղաքականության հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և գործնական հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված նոր պատժատեսակների և նշանակման հիմնահարցերի, այդ թվում՝ պատժի նշանակման հարցում քրեադատավարական նորմերի ազդեցության (պատժատեսակի, պատժաչափի, պատժից ազատելու, պայմանականորեն այն չկիրառելու, հետաձգելու, մեղմ կամ խիստ պատիժ նշանակելու չափորոշիչների) հիմնահարցերը, համաձայնությամբ տուգանքի՝ որպես դատավարական նոր ինստիտուտի, կիրառման և պատժի նշանակման կարգավորումները, պրոբացիան, պրոբացիայի ծառայության կողմից դատարան ներկայացված միջնորդությունների քննության հետ կապված գործնական խնդիրների քննարկումը, պատժի կատարման ընթացքում ՀՀ քրեակատարողական օրենսգրքի կիրառումը, ծանր հիվանդության հիմքով պատժից ազատելու ինստիտուտի կիրառումը, պատժի նշանակման կանոնների քրեաիրավական և քրեադատավարական առանձնահատկություններն ու առկա խնդիրները, պատիժ կատարող հիմնարկների և մարմինների պաշտոնատար անձանց գործողության, անգործության կամ ընդունած որոշումների դեմ ներկայացված բողոքների լուծման կարգը դատարանում, դատական ակտի կատարման փուլում հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ պատիժ նշանակելու նոր կանոնները և առաջացող խնդիրները:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

48. J-CR-005-26. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և իրականացվող բարեփոխումների, վիճահարույց հարցերի շուրջ ուղենիշային որոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է ՀՀ քրեական օրենսդրության արդի հարցեր, այդ թվում՝

- հանցագործությունների որակման իմացաբանական հիմունքները,

- ըստ հանցակազմի տարրերի հանցագործությունների որակման առանձնահատկությունները,
- չավարտված հանցավոր գործունեության և հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքերում արարքների որակման հիմնախնդիրները,
- հանցագործությունների բազմակիության դեպքում հանցավոր արարքների որակման և եզակի բարդ հանցագործություններից դրանց սահմանազատման հիմնախնդիրները,
- քրեաիրավական նորմերի մրցակցության (բովանդակային և տեմպորալ) դեպքում հանցագործությունների որակման հիմնախնդիրները,
- հանցակցությամբ կատարվող հանցագործությունների որակման հիմնախնդիրները, մասնավորապես՝ հանցակիցների տեսակների և հանցակցության ձևերի տարանջատման հիմնահարցերը և հանցակցության ձևերի որակման առանձնահատկությունները, հանցակցի սահմանազանցման, հանցակցի կողմից հանցագործությունից կամովին հրաժարվելու, չհաջողված հանցակցության որակման, հատուկ սուբյեկտով հանցագործություններում հանցակցության որակման հիմնահարցերը, ինչպես նաև հանցագործության միջնորդավորված կատարման որակման հիմնախնդիրներն ու առնչակցությունը հանցակցությունից սահմնազատելու և որակելու հիմնահարցերը,
- բլանկետային նորմերով և արժեքավորվող հատկանիշներով նկարագրված հանցագործությունների որակման առանձնահատկությունները,
- ատելության շարժառիթով հանցագործությունների որակման հիմնախնդիրները,
- էլեկտրոնային փաստաթղթերի կեղծման առանձնահատկությունները,
- արարքի հանցավորությունը, քրեական պատասխանատվությունը և պատիժը բացառող հանգամանքները, պատժի ինստիտուտին և պատիժ նշանակելուն առնչվող հարցերը,
- ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված հանցավոր արարքների (մասնավորապես՝ մարդու կյանքի, առողջության, ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիության, սեռական ազատության և անձեռնմխելիության, ընտանիքի և երեխայի շահերի, սեփականության, տնտեսական գործունեության (այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու (փողերի լվացման), հասարակական անվտանգության, հասարակական կարգի և բնակչության առողջության, մասնավորապես՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության, շրջակա միջավայրի անվտանգության, ինչպես նաև պետական իշխանության, պետական ծառայության, կառավարման կարգի և արդարադատության, զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների և այլն) ճշգրիտ որակման հիմնահարցերը, հարակից հանցակազմերը միմյանցից սահմանազատելու հիմնախնդիրները և դրանց լուծման ոլորտում օրենսդրական ու իրավակիրառ փորձը,

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

49. J-CR-006-26. Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրներ

Դասընթացը նպատակ ունի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում, ՀՀ քրեական իրավունքի նորարարություն հանդիսացող, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրների բացահայտմանը, մասնավորապես՝ իրավաբանական անձի հասկացության, հանցակազմի տարրերի, հանցանքի կատարման եղանակների, ինչպես նաև պրակտիկայում ի հայտ եկող հիմնահարցերի վերհանմանն ու լուծմանը: Կքննարկվեն նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և կար-

գը, քրեաիրավական ներգործության միջոցները, պատժի տեսակները և դրանց առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

50. J-CR-007-26. Կալանքի և այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը

Դասընթացն անհրաժեշտ է կալանքի և այլ խափանման միջոցներ կիրառման, այդպիսի դեպքերի վերաբերյալ ազգային և միջազգային փորձի ուսումնասիրության, այս ոլորտում անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների կատարելագործման, գործնական խնդիրների վերհանման և փորձի փոխանակման համար:

Դասընթացի շրջանակում ուսումնասիրման առարկա կդառնան ազատության սահմանափակման հիմքերը, ազատությունից զրկված անձանց համար նախատեսված երաշխիքները, կներկայացվեն կալանքի օրինականության մասին ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները ՄԻԵԴ վերաբերելի նախադեպային իրավունքը:

Դասընթացը ներառում է նաև հետևյալ հարցերը՝

- քրեական դատավարության օրենսգրքում խափանման միջոցների հետ կապված իրավակարգավորումների առանձնահատկությունները,
- կալանքի և այլընտրանքային խափանման միջոցների համակարգը (միջազգային չափանիշներ, ՄԻԵԴ-ի վճիռներ),
- կալանքը,
- այլընտրանքային խափանման միջոցները և դրանց կիրառման առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

51. J-CR-008-26. Անչափահաս կամ խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանություն

Դասընթացն անհրաժեշտ է անչափահաս կամ խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանության ոլորտում գիտելիքներն ընդլայնելու, տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու, ինչպես նաև իրավական նոր դիրքորոշումները ունկնդիրներին մատուցելու համար:

Դասընթացի շրջանակում քննարկումները տեղի կունենան, մասնավորապես, հետևյալ ասպեկտներով՝

- անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները,
- անչափահասների մասնակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերի առանձնահատկությունները,
- անչափահասների և խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների մասնակցությամբ վարույթի սկզբունքային առանձնահատկությունները, ներպետական օրենսդրական կարգավորումները և միջազգային փորձը,
- անչափահասների և խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման առանձնահատկությունները,
- ապացուցման գործընթացի առանձնահատկությունները,
- անչափահաս և խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների մասնակցությունը քննչական և դատավարական գործընթացին,
- օրինական ներկայացուցչի և պաշտպանի մասնակցությունը անչափահաս և խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների մասնակցությամբ վարույթին:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

52. J-CR-009-26. Կիբեռհանցագործությունների վերաբերյալ գործերի առանձնահատկությունները

Դասընթացի նպատակն է կիբեռհանցագործությունների վերաբերյալ գործերի առանձնահատկությունների (համակարգչային ինֆորմացիայի կրիմինալիստիկական նկարագիր) շուրջ ունկնդիրների գիտելիքների ընդլայնումը: Այն ներառում է՝

- կիբեռհանցագործությունների վերաբերյալ օրենսդրության արդի հիմնախնդիրները,
- կիբեռհանցավորության դեմ պայքարում միջազգային համագործակցության անհրաժեշտությունը,
- կիբեռհանցագործության քննության արդյունավետ միջոցները. Գաղտնի քննչական գործողությունները,
- կիբեռհանցագործությունների վերաբերյալ քրեական օրենսդրությունը և վերաբերելի իրավական ակտերը:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

53. J-CR-010-26. Խոցելի խմբերի նկատմամբ կատարված հանցագործությունների քննության առանձնահատկությունները

Դասընթացի նպատակն է խոցելի խմբերի նկատմամբ կատարված հանցագործությունների քննության առանձնահատկությունների վերաբերյալ ունկնդիրների գիտելիքների ընդլայնումը:

Դասընթացը ներառում է՝

- երեխաների նկատմամբ բռնության հասկացությունը, տեսակները, հանցավոր դրսևորումների քրեական բնութագիրը և քննության առանձնահատկությունները,
- բռնության ենթարկված երեխայի հարցաքննության առանձնահատկությունները,
- երեխաների նկատմամբ բռնության հոգեկան հետևանքները և հակազդման առանձնահատկությունները,
- անչափահասների նկատմամբ կամ նրանց կողմից կատարված հանցանքներով քրեական վարույթների առանձնահատկությունները դրանց քննության սկզբնական և հետագա փուլերում (քննության մեթոդիկան և տակտիկան),
- երեխայի իրավունքների ապահովման առանձնահատկությունները դատական քննության փուլում, օրինական ներկայացուցչի, մանկավարժի և մասնագետի (հոգեբանի) մասնակցությունը քրեական գործերով վարույթին՝ որպես երեխայի իրավունքների և օրինական շահերի ապահովման երաշխիք,
- երեխաների նկատմամբ բռնության դեպքերի քննության ընթացքում միջոլորտային և միջգերատեսչական համագործակցությունն ու դրա ձևերը,
- գենդերի հիման վրա կատարվող բռնարարքների քննության առանձնահատկությունները,
- ՀՀ քրեական օրենսդրությամբ սեքսուալ հետապնդման և սեքսուալ չարաշահումների (շահագործման) համար քրեական պատասխանատվություն առաջացնող արարքները՝ որպես գենդերային հանցագործություններից պաշտպանության տարատեսակներ,
- այս հանցագործությունների քննության մեթոդիկայի, քննության տակտիկայի, քրեական հետապնդման առանձնահատկությունները,
- խոցելի այլ խմբերի նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները, համապատասխան օրենսդրության և վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

54. J-CR-011-26. Դատական գործերի դասակարգում, գործերի առաջնահերթության որոշում, դատական նիստերի նախապատրաստում

Դասընթացն ուղղված է դատական գործերի դասակարգման, գործերի առաջնահերթության որոշման, դատական նիստերի նախապատրաստման վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ընդլայնմանն ու հմտությունների կատարելագործմանը:

Դասընթացի շրջանակներում քննարկման առարկա կդառնան դատական գործերի դասակարգման և գործերի առաջնահերթության որոշման, ծանրաբեռնվածության արդյունավետ կառավարման, կոլեգիալ դատական կազմերի աշխատանքի արդյունավետ կազմակերպման գործնական հմտությունները, դատական գործերի դասակարգման և գործերի առաջնահերթության որոշման մեթոդներն ու մեխանիզմները, միջազգային լավագույն փորձի և Բարձրագույն դատական խորհրդի կարգապահական որոշումների համատեքստում գործերի քննության և լուծման ողջամիտ ժամկետների պահպանման հիմնահարցերը, դատական նիստերի նախապատրաստմանն ուղղված գործողություններն ու դրանց առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

55. J-CR-012-26. Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրն ու քննության առանձնահատկությունները

Դասընթացը պայմանավորված է խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի ապահովման օրենսդրական պահանջների, միջազգային չափանիշների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է խոշտանգումների քրեաիրավական բնութագիրը, որակման առանձնահատկությունները, հարակից հանցակազմերից սահմանազատելու հիմնահարցերը, խոշտանգումների վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները, ինչպես նաև դրա կանխարգելման, արձանագրման և արդյունավետ բացահայտման Ստամբուլի արձանագրության չափանիշներին համապատասխան խոշտանգումների ու վատ վերաբերմունքի հետքերի փաստագրման վերաբերյալ հարցերը, խոշտանգումների վերաբերյալ ՄԻԵԴ պրակտիկան:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

56. J-CR-013-26. Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ

Դասընթացի նպատակն է զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների քննության առանձնահատկությունների վերաբերյալ ունկնդիրների գիտելիքների ընդլայնումը:

Դասընթացի շրջանակներում ուսումնասիրության առարկա կդառնան զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների ընդհանուր պատճառներն ու պայմանները, քրեական օրենսգրքով նախատեսված դիտավորությամբ կամ անզգուշությամբ կատարվող հանրորեն վտանգավոր արարքների հանցակազմերը (սուբյեկտ, օբյեկտ, սուբյեկտիվ, օբյեկտիվ կողմերը), որոնք հատուկ են զինվորական ծառայությանը, միջավայրին, դրանց կենցաղի պայմաններին: Բանակի քրեածին իրավիճակի վրա ներգործող այնպիսի բացասական գործոններ, որոնք բնորոշ են նաև ամբողջ հասարակությա-

նը, զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ ծնող ոչ կանոնադրային հարաբերությունները և դրանց կանխարգելման ուղիները և այլն:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

57. J-CR-014-26. Մինչդատական քրեական վարույթի ընթացքում մարդու իրավունքների պաշտպանություն

Դասընթացի նպատակն է մինչդատական վարույթում «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ երաշխավորված՝ ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանությանն ուղղված հմտությունների վերաբերյալ ունկնդիրների գիտելիքների ընդլայնումը:

Դասընթացի շրջանակներում ուսումնասիրության առարկա կդառնան մինչդատական քրեական վարույթի ընթացքում մարդու իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության համընդհանուր սկզբունքները, երաշխիքները, անձի ազատության և անձնական անձեռնմխելիության, ազատությունից կամայականորեն չզրկվելու, անմեղության կանխավարկածի, ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու, խոշտանգումից զերծ մնալու, ողջամիտ ժամկետում դատաքննության և այլ իրավունքները:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

58. J-CR-015-26. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ քրեական վարույթներով զոհակենտրոն մոտեցումների և զոհակենտրոն քննության ապահովում

Դասընթացը պայմանավորված է թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտին ներգրավված սուբյեկտների՝ քրեական վարույթներով զոհակենտրոն մոտեցումներով քննության արդյունավետ ապահովմամբ, ներպետական և միջազգային իրավական ակտերով սահմանված՝ մարդու թրաֆիքինգի կամ շահագործման վերաբերյալ կարգավորումների կապակցությամբ առավել խորը գիտելիքների, այդ ոլորտում գործնական հմտությունների ձեռքբերման, կատարելագործման և գործնականում դրանց արդյունավետ կիրառման անհրաժեշտությամբ:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

59. J-AC-CR-001-26. Կոռուպցիոն հանցանքների քննության առանձնահատկությունները

Դասընթացն անհրաժեշտ է կոռուպցիոն հանցանքների քննության վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու, ինչպես նաև տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու համար:

Դասընթացը ներառում է՝

- կոռուպցիոն բնույթի հանցագործությունների սահմանումը ՀՀ քրեական օրենսգրքի հավելվածով,
- ՀՀ քրեական գործող օրենսգրքով նախատեսված կոռուպցիոն հանցագործությունների ցանկով սահմանված հանցակազմերի որակման հիմնահարցերը, հարակից հանցակազմերը միմյանցից սահմանազատելու հիմնախնդիրները,

- օպերատիվ-հետախուզական միջոցառումները և գաղտնի քննչական գործողություններ իրականացնելու միջնորդության քննության առանձնահատկությունները՝ կոռուպցիոն բնույթի հանցանքներով,
- միջազգային իրավական փաստաթղթերի, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքով կոռուպցիոն բնույթի հանցանքներին վերաբերելի այլ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ուսումնասիրությունը,
- կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ հաղորդում ներկայացնող անձանց պաշտպանության ազդարարման համակարգը,
- գույքի արգելադրման ինստիտուտը ՀՀ քրեական դատավարությունում:

Դասընթացը նախատեսված է կոռուպցիոն գործեր քննող դատավորների համար:

60. J-AC-CR-002-26. Կոռուպցիոն հանցանքների որակման հիմնահարցեր

Դասընթացն անհրաժեշտ է կոռուպցիոն հանցագործությունների որակման վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու, ինչպես նաև տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու համար:

Դասընթացը ներառում է՝
- ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված կոռուպցիոն հանցանքների որակման հիմնահարցերը,
- դիսպոզիտիվ հատկանիշները,
- կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դասակարգման չափանիշները,
- կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ ՀՀ ենթաօրենսդրական ակտեր,
- կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ հաղորդում ներկայացնող անձանց պաշտպանություն,
- ազդարարման համակարգ,
- հարակից հանցակազմերը միմյանցից սահմանազատելու հիմնախնդիրները,
- հարկային և մաքսային օրենսդրության կիրառման հիմնախնդիրները կոռուպցիոն բնույթի հանցանքներով,
- հարկային հանցագործությունների վերաբերյալ գործերով դատական երաշխիքների և դատարանում գործերի քննության առանձնահատկությունները՝ առաջացող հարկային բնույթի հարցերի համատեքստում:

Նախատեսված է կոռուպցիոն գործեր քննող դատավորների համար:

61. J-AC-CR-003-26. Հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման (փողերի լվացում) հանցագործության որակումը և քննության մեթոդիկան

Դասընթացն անհրաժեշտ է հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման հանցագործության որակման և քննության մեթոդիկայի վերաբերյալ ունկնդիրների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար: Այն ներառում է ՀՀ համապատասխան օրենսդրության ուսումնասիրությունը, հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման (փողերի լվացում) հանցագործության որակման իմացաբանական հիմունքները, ըստ հանցակազմի տարրերի (օբյեկտ, օբյկետիվ կողմ, սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ) նշված հանցագործության որակման առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է կոռուպցիոն գործեր քննող դատավորների համար:

62. J-AC-CR-004-26. Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ ՄԻԵԴ պրակտիկան

Դասընթացն անհրաժեշտ է կոռուպցիոն հանցագործությունների քննության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի շուրջ Ունկնդիրների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

– կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացումը,
– կոռուպցիայի կանխարգելման ոլորտում միջազգային փորձը,
– կոռուպցիոն հանցագործությունների քննության վերաբերյալ ՄԻԵԴ պրակտիկան,

Դասընթացը նախատեսված է կոռուպցիոն գործեր քննող դատավորների համար:

63. J-AC-CR-005-26. Կոռուպցիայի կանխարգելման արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է կոռուպցիայի կանխարգելման ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է՝

– կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական ուղղությունները,
– շահերի բախումը և կոռուպցիայի կանխարգելումը,
– օրենսդրությամբ հետապնդվող նպատակները,
– ԳՐԵԿՈ-ի և ՄԱՆԻՎԱԼ-ի գործունեության առանձնահատկությունները:

Դասընթացը նախատեսված է կոռուպցիոն գործեր քննող դատավորների համար:

64. J-AC-CR-006-26. Տնտեսական հանցագործությունների քննության առանձնահատկությունները

Դասընթացն անհրաժեշտ է տնտեսական հանցագործությունների քննության վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքները և հմտությունները կատարելագործելու համար:

Դասընթացը ներառում է ֆինանսական բուրգ ստեղծելու, կազմակերպելու կամ ղեկավարելու, հակամրցակցային գործունեության, արժեթղթերի շուկայում գնային չարաշահման համապատասխան նորմերի, մասնավոր ոլորտում ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու, կաշառք տալու և ստանալու և տնտեսական այլ հանցագործությունների վերաբերյալ արդի հիմնահարցերը:

Դասընթացը նախատեսված է կոռուպցիոն գործեր քննող դատավորների համար:

65. J-AC-CV-001-26. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման արդի հիմնահարցեր

Դասընթացն անհրաժեշտ է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում առկա խնդրահարույց հարցերի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքներն ընդլայնելու համար:

Դասընթացը ներառում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը կարգավորող օրենսդրության կիրառման հետ կապված հարցերը, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի հատուկ նորմերը և դրանց հարաբերակցությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգավորումների և օրենսգրքում կատարված վերջին փոփոխությունների հետ:

Դասընթացի շրջանակում քննարկման առարկա են դառնում նաև բռնագանձված գույքի կառավարման (մասնավորապես՝ հաշվառում և գնահատում, պետության սեփականության իրավունքի գրանցում, գույքի շրջանառություն, մասնավորեցում, օտարում, պահպան-

վածության ապահովման և կառավարման նկատմամբ վերահսկողություն) ինչպես նաև շահագրգիռ անձանց, նրանց մասնակցության և իրավունքների պաշտպանության երաշխիքներին, արտերկրում գտնվող գույքի նկատմամբ ապահովում կիրառելու և բռնագանձելու առանձնահատկություններին վերաբերող և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքի» կիրառման ընթացքում արձանագրված, այդ թվում՝ քաղաքացիական դատավարության խնդիրները:

Դասընթացը նախատեսված է հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

66. J-AC-CV-002-26. Ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ հայցի (նախնական) ապահովման միջոցների կիրառումը և ապացույցների (նախնական) ապահովումը

Դասընթացն անհրաժեշտ է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընթացքում հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման և ապացույցների նախնական ապահովման շուրջ առկա խնդրահարույց հարցերի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքներն ընդլայնելու համար:

Դասընթացի շրջանակում քննարկման առարկա կդարձվեն հայցի ապահովման վերաբերյալ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած և հնարավոր խնդիրները, հայցի նախնական ապահովման միջոցների, իսկ հետագայում՝ հայցի ապահովման միջոցների կիրառման, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերի, հիմնավորումների և գնահատման, ապացույցների նախնական ապահովման հետ կապված հարցերը:

Դասընթացը նախատեսված է հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

67. J-AC-CV-003-26. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննությունը դատարանում

Դասընթացն անհրաժեշտ է դատարանում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննության վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքներն ընդլայնելու համար:

Դասընթացի շրջանակում քննարկման առարկա կդարձվեն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջների քննության ժամանակ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կանոնների կիրառելիության առանձնահատկությունները, հայցադիմումի ներկայացման, հայցի հիմքի և (կամ) առարկայի լրացման, հակընդդեմ հայցի ներկայացման, հաշտության համաձայնության, գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի, ապացուցման և ապացուցման պարտականության բաշխման այլ հարցերի շուրջ գործնականում հանդիպող խնդիրները:

Քննարկման առարկա կդառնան նաև դատախազության եզրակացությամբ արձանագրված ենթադրաբար ապօրինի ծագում ունեցող գույքային միավորների շրջանակում և փաստական տվյալներով կաշկանդված լինել-չլինելու հիմնախնդիրները, հայցի ապահովման միջոցների կիրառելու վերաբերյալ միջնորդության հիմնավորումները գնահատելու չափանիշները, գործարքների անվավերությունն ու բարեխիղճ ձեռքբերողից գույքը հետ պահանջելու իրավունքի իրացումը, պետական շահերի պաշտպանության հայցերով և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցերով հայցային վաղեմության ժամկետի կիրառման առանձնահատկությունները, վինդիկացիոն և ռեստիտուցիոն հայցերի մրցակցու-

թյան և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքի» կիրառման ընթացքում արձանագրված քաղաքացիական դատավարության խնդիրները:

Դասընթացը նախատեսված է հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

68. J-AC-CV-004-26. ՄԻԵԴ-ի պրակտիկան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի վերաբերյալ

Դասընթացն անհրաժեշտ է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի վերաբերյալ ՄԻԵԴ-ի պրակտիկան Ունկնդիրներին ներկայացնելու և այդ ոլորտում նրանց գիտելիքներն ընդլայնելու համար:

Դասընթացի շրջանակներում քննարկման առարկա կդառնան Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում և հայցիգործակցությունը:

Դասընթացը նախատեսված է հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

69. J-AC-CV-005-26. Միջազգային պայմանագրերի անմիջական կիրառման առանձնահատկությունները և միջազգային համագործակցությունը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում

Դասընթացն անհրաժեշտ է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի վերաբերյալ միջազգային պայմանագրերի անմիջական կիրառման և միջազգային համագործակցության պրակտիկան Ունկնդիրներին ներկայացնելու և այդ ոլորտում նրանց գիտելիքներն ընդլայնելու համար:

Դասընթացի շրջանակներում քննարկման առարկա կդառնան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում միջազգային համագործակցության գործիքակազմը, համագործակցության կանոնները, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի («Կոռուպցիայի դեմ պայքարի և դրա կիրառման պրակտիկայի վերաբերյալ» (ՄԱԿ 2007թ.)) կիրառման առանձնահատկությունները:դատախազությա

Դասընթացը նախատեսված է հակակոռուպցիոն քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

70. J-D-001-26. Փաստարկում և հռետորաբանություն

Դասընթացը պայմանավորված է ապացուցման, հերքման, հիմնավորման, զրուցակիցների մոտ համոզմունքի ձևավորման, տպավորիչ ելույթի ու արդյունավետ բանավեճի տեխնոլոգիաների տիրապետման, դրանց ճիշտ կիրառման գործնական հմտությունների կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- փաստարկման գործընթացի բաղադրիչները,
- փաստարկման գործընթացի եղանակները,
- փաստարկման համակարգին ներկայացվող պահանջները,
- ավանդական և ժամանակակից հռետորիկայի զինանոցը,
- առավել հաճախ հանդիպող սխալները,
- բանավեճի ընթացքում կիրառվող կառուցողական և ապակառուցողական տեխնոլոգիաները և վերջիններիս չեզոքացման մեթոդաբանական սկզբունքները:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

71. J-D-002-26. Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն. Կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը

Դասընթացը նպատակ ունի հետևողականորեն կատարելագործել ունկնդիրների մասնագիտական գիտելիքները և ունակությունները կոռուպցիոն հանցագործությունների և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմի կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ:

Դասընթացը ներառում է քննարկումներ կոռուպցիոն հանցագործությունների շրջանակի, սուբյեկտի, կոռուպցիոն վարքագծի արդյունքում ստացված գույքի/օգուտի քրեաիրավական ճակատագրի, կոռուպցիոն հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկելու նախապայմանների, կոռուպցիոն հանցագործության դեպքով քրեական գործ հարուցելու դատավարական խնդիրների, կոռուպցիոն հանցագործության դեմ պայքարի կազմակերպաիրավական նախադրյալների, կոռուպցիոն առանձին հանցագործություններով ապացուցման բեռի բաշխման առանձնահատակությունների, կոռուպցիոն հանագործության վերաբերյալ քրեական գործով վարույթում ենթադրյալ հանցանք կատարած անձի իրավունքների և իրավաչափ շահերի ապահովման դատավարական երաշխիքների, անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական կառուցակարգերի և միջազգային իրավական փոխօգնության մեխանիզմների, կոռուպցիոն հանցագործության վերաբերյալ քրեական գործով ապացույցների հավաքման հիմնական դատավարական միջոցների. քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների վերաբերյալ:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

72. J-D-003-26. Սեռով պայմանավորված, ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրները

Դասընթացը նպատակ ունի հետևողականորեն կատարելագործել ունկնդիրների մասնագիտական գիտելիքները և ունակությունները գենդերով պայմանավորված, ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական կառուցակարգերի կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ:

Դասընթացը ներառում է քննարկումներ անչափահասների նկատմամբ կիրառվող պատժի համակարգի, անչափահասների նկատմամբ պատիժ նշանակելու հիմնախնդիրների, անչափահասներին պատժից ազատելու առանձնահատկություններին, նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու առանձնահատկությունների, անչափահասների հանդեպ կատարվող սեքսուալ ոտնձգությունների և ընտանեկան բռնության դրսևորումների, քրեական դատավարության օրենսդրության մեջ և գենդերով պայմանավորված և ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ քրեական գործերի քննության վարույթում կարծրատիպերի ազդեցության, անչափահասների իրավաչափ շահերի ապահովման դատավարական երաշխիքների, երեխայի լավագույն շահի ապահովման համատեքստում անչափահասներին մեղսագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի դատավարական առանձնահատկությունների, «Ընտանեկան բռության կանխարգելման, ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով սահմանված պաշտպանության միջոցների՝ ընտանեկան բռնության

վերաբերյալ գործերի քննության քրեադատավարական գործիքակազմի հետ հարաբերակցության վերաբերյալ:

Դասընթացը նախատեսված է քրեական գործեր քննող դատավորների համար:

73. J-D-004-26. Միջազգային աշխատանքային իրավունք

Դասընթացն անհրաժեշտ է աշխատանքային իրավունքի ոլորտում առկա միջազգային իրավական ակտերի և միջազգային համագործակցության վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքներն ընդլայնելու, տեսական գիտելիքների գործնական կիրառման հմտությունները զարգացնելու, ինչպես նաև այդ կապակցությամբ իրավական առկա դիրքորոշումներն Ունկնդիրներին մատուցելու համար:

Դասընթացը ներառում է միջազգային աշխատանքային իրավահարաբերությունների, դրանց առանձնահատկությունների արդի հարցերը, աշխատանքային իրավունքի ոլորտում արտասահմանյան երկրների միջազգային փորձը, աշխատանքային իրավունքի ոլորտում առկա միջազգային իրավական ակտերի և կիրառելի իրավական դիրքորոշումների ուսումնասիրությունը:

Դասընթացը նախատեսված է քաղաքացիական գործեր քննող դատավորների համար:

74. J-D-005-26. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարում

Դասընթացը պայմանավորված է ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացին մասնակցության արդյունավետության և ՄԻԵԿ չափանիշների՝ ներպետական օրենսդրության մեջ ներդնելու, հետագայում՝ ՄԻԵԴ-ի արձանագրած խախտումները կանխելու կամ բացառելու տեսանկյունից դատավորների գիտելիքների ծավալի ընդլայնման և գործնական հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին ունկնդիրը՝

- կունենա գիտելիքներ ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացի վերաբերյալ,
- ՄԻԵԴ վճիռների կատարումն ապահովող իրավական գործիքների և կառուցակարգերի վերաբերյալ,
- ՄԻԵԴ վճիռների կատարման և կատարման նկատմամբ վերահսկողության վերաբերյալ,
- ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացի ԵՄ կառուցակարգերի և դերակատարների վերաբերյալ,
- ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացի ներպետական կառուցակարգերի և դերակատարներ վերաբերյալ:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

75. J-D-006-26. Դատավորի վարպետություն և դատական էթիկա

Դասընթացը պայմանավորված է դատավորի էթիկայի, վարքագծի կանոնների, դատական նիստի վարման, այլ երկրներում դատական նիստերի ընթացքի ուսումնասիրության, դատավարության մասնակիցների հետ հաղորդակցության շուրջ առկա իրավակարգավորումներով սահմանված չափանիշների, դատական անկողմնակալության, դատական իշխանության անկախության ներքին և արտաքին կողմերի, իրավական հիմքերի, երաշխիքների, ինչպես նաև սահմանադրահիրավական (դատահիրավական) բարեփոխումների շրջանակում դատական իշխանության անկախությանը վերաբերող հիմնահարցերի ներկայացման, այս ոլորտներում գիտելիքների ծավալի ընդլայնման և կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացը նախատեսված է բոլոր դատավորների համար:

IV. ՓԱԹԵԹՆԵՐ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՓԱԹԵԹՆԵՐ

Փաթեթ 1.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-G-001-26	Դատավորի էթիկա, վարքագծի կանոններ և դատական արհեստ	4
2.	J-G-012-26	Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հիմնահարցեր	4
3.	J-G-003-26	ՀՀ սահմանադրական արդարադատության արդի հարցեր	4
4.	J-G-006-26	Էլեկտրոնային արդարադատություն	4
5.	J-G-008-26	Մեդիա իրավունք	10
6.	J-G-002-26	Հավասարության ապահովման և խտրականության արգելքի վերաբերյալ արդի հարցեր	4
7.	J-G-010-26	Կառավարման հմտություններ և ներազդման հոգեբանություն	6
8.	J-G-004-26	Դատական ակտի մշակման հմտություններ	4

Փաթեթ 2.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-G-001-26	Դատավորի էթիկա, վարքագծի կանոններ և դատական արհեստ	4
2.	J-G-012-26	Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հիմնահարցեր	4
3.	J-G-008-26	Մեդիա իրավունք	10
4.	J-G-011-26	Հաշմանդամություն ունեցող անձանց և այլ խոցելի խմբերի մասնակցությամբ գործերի քննություն, նրանց իրավունքների, ինչպես նաև նրանց հետ վարվեցողության կանոնների հիմնահարցեր	4
5.	J-G-007-26	Դատավորին անհրաժեշտ համակարգչային-տեղեկատվական ռեսուրսների օգտագործման հմտություններ	4
6.	J-G-013-26	Դատավորների, դատախազների և քննիչների գործունեության միջոցով գենդերային հավասարության ապահովման հիմնահարցեր	4

7.	J-G-017-26	Դատական իշխանության անկախությունը	4
8.	J-G-014-26	Հռետորական արվեստ և հաղորդակցում	2
9.	J-G-016-26	Կարգապահական պատասխանատվության մեխանիզմների բարելավումը՝ որպես արտակարգ դատական վեթինգի այլընտրանք	4

Փաթեթ 3.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-G-001-26	Դատավորի էթիկա, վարքագծի կանոններ և դատական արհեստ	4
2.	J-G-012-26	Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հիմնահարցեր	4
3.	J-G-005-26	Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումն ու դրա դեմ պայքարը	4
4.	J-G-004-26	Դատական ակտերի մշակման հմտություններ	4
5.	J-G-017-26	Դատական իշխանության անկախությունը	4
6.	J-G-008-26	Մեդիա իրավունք	10
7.	J-G-009-26	Իրավաբանական գիր և մեթոդաբանություն	2
8.	J-G-015-26	Համակարգչային անվտանգություն	2
9.	J-G-010-26	Կառավարման հմտություններ և ներազդման հոգեբանություն	6

2. ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՄԲ ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՓԱԹԵԹ

Փաթեթ 1.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-BN-001-26	Սնանկության վարույթի արդի հարցեր	10
2.	J-BN-002-26	ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր	4
3.	J-BN-003-26	Կորպորատիվ իրավունքի արդի հարցեր	6
4.	J-BN-004-26	Պարտավորական հարաբերությունների արդի հարցեր	6
5.	J-BN-005-26	Բանկային իրավունքի արդի հարցեր	4

6.	J-BN-006-26	Սնանկության գործերով միջազգային պրակտիկա, նախադեպային որոշումների ուսումնասիրություն	2
7.	J-BN-007-26	ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումները սնանկության գործերով	4
8.	J-BN-008-26	Սնանկության գործի շրջանակներում քննվող քաղաքացիական գործերի առանձնահատկությունները	4

3. ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՄԲ ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՓԱԹԵԹՆԵՐ

Փաթեթ 1.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-CV-002-26	Կորպորատիվ իրավունքի արդի հարցեր	4
2.	J-CV-003-26	Աշխատանքային իրավունքի արդի հարցեր	6
3.	J-CV-005-26	ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր	12
4.	J-CV-011-26	Պետական գնումների գործընթացի բողոքարկման իրավական կարգավորումները	4
5.	J-CV-001-26	Պարտավորական հարաբերությունների արդի հարցեր	6
6.	J-CV-010-26	Հաշտարարություն և արբիտրաժ	6
7.	J-CV-013-26	Դատական գործերի դասակարգում, գործերի առաջնահերթության որոշում, դատական նիստերի նախապատրաստում	2

Փաթեթ 2.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-CV-004-26	Քաղաքացիական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	4
2.	J-CV-007-26	ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումները քաղաքացիական գործերով	6
3.	J-CV-012-26	Ընտանեկան իրավունքի արդի հարցեր	6
4.	J-CV-006-26	Ոչ նյութական վնասի հատուցման հիմնախնդիրներ	4
5.	J-CV-005-26	ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցեր	12
6.	J-CV-009-26	Հատուկ հայցային վարույթի և հատուկ վարույթներով գործերի քննության առանձնահատկություններ	6
7.	J-CV-013-26	Դատական գործերի դասակարգում, գործերի առաջնահերթության որոշում, դատական նիստերի նախապատրաստում	2

Փաթեթ 3.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-CV-009-26	Հատուկ հայցային վարույթի և հատուկ վարույթներով գործերի քննության առանձնահատկություններ	6
2.	J-CV-001-26	Պարտավորական հարաբերությունների արդի հարցեր	6
3.	J-CV-012-26	Ընտանեկան իրավունքի արդի հարցեր	6
4.	J-CV-003-26	Աշխատանքային իրավունքի արդի հարցեր	6
5.	J-CV-008-26	ՀՀ քաղաքացիական իրավունքի արդի հարցեր	12
6.	J-CV-004-26	Քաղաքացիական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	4

4. ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՄԲ ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՓԱԹԵԹՆԵՐ

Փաթեթ 1.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-AD-001-26	ՀՀ վարչական վարույթի արդի հարցեր	14
2.	J-AD-005-26	ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումները վարչական գործերով	6
3.	J-AD-003-26	Հատուկ վարույթի գործերի քննության առանձնահատկություն-ները	10
4.	J-AD-007-26	Հարկային և մաքսային իրավունքի արդի հարցեր	8
5.	J-AD-008-26	Դատական գործերի դասակարգում, գործերի առաջնահերթության որոշում, դատական նիստերի նախապատրաստում	2

Փաթեթ 2.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-AD-002-26	ՀՀ վարչական դատավարության արդի հարցեր	14
2.	J-AD-001-26	ՀՀ վարչական վարույթի արդի հարցեր	14
3.	J-AD-005-26	ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումները վարչական գործերով	6
4.	J-AD-004-26	Տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնահարցեր	2
5.	J-AD-006-26	Վարչական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների կիրառման արդի հարցեր	4

5. ՔՐԵԱՒՐԱՎԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՄԲ ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՓԱԹԵԹՆԵՐ

Փաթեթ 1.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-CR-001-26	Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները, միջազգային դատարանների իրավակիրառ պրակտիկան և միջազգային համագործակցությունը	6
2.	J-CR-003-26	ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	10
3.	J-CR-005-26	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	10
4.	J-CR-004-26	Պատիժ նշանակելու, կատարելու, պատժից ազատելու կամ այն փոխարինելու նյութաիրավական և դատավարական հիմնախնդիրներ	4
5.	J-CR-010-26	Խոցելի խմբերի նկատմամբ կատարված հանցագործությունների քննության առանձնահատկությունները	4
6.	J-CR-011-26	Դատական գործերի դասակարգում, գործերի առաջնահերթության որոշում, դատական նիստերի նախապատրաստում	2
7.	J-CR-013-26	Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ	4

Փաթեթ 2.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-CR-003-26	ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	10
2.	J-CR-005-26	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	10
3.	J-CR-002-26	ՀՀ Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումները քրեական գործերով	4
4.	J-CR-009-26	Կիբեռհանցագործությունների վերաբերյալ գործերի առանձնահատկությունները	4
5.	J-CR-006-26	Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրներ	4
6.	J-CR-014-26	Մինչդատական քրեական վարույթի ընթացքում մարդու իրավունքների պաշտպանություն	4
7.	J-CR-015-26	Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ քրեական վարույթներով զոհակենտրոն մոտեցումների և զոհակենտրոն քննության ապահովում	4

Փաթեթ 3.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-CR-003-26	ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	10

2.	J-CR-005-26	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	10
3.	J-CR-007-26	Կալանքի և այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը	4
4.	J-CR-008-26	Անչափահաս կամ խոցելի այլ խմբին պատկանող իրավախախտների իրավունքների պաշտպանությունը	4
5.	J-CR-006-26	Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրներ	4
6.	J-CR-001-26	Քրեական գործերով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները, միջազգային դատարանների իրավակիրառ պրակտիկան և միջազգային համագործակցությունը	6
7.	J-CR-012-26	Խոշտանգումների քրեաիրավական բնութագիրն ու քննության առանձնահատկությունները	2

6. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՄԲ ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՓԱԹԵԹ

Փաթեթ 1.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-AC-CR-001-26	Կոռուպցիոն հանցագործությունների քննության առանձնահատկությունները	10
2.	J-AC-CR-002-26	Կոռուպցիոն հանցանքների որակման հիմնահարցեր	10
3.	J-AC-CR-003-26	Հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման (փողերի լվացում) հանցագործության որակումը և քննության մեթոդիկան	6
4.	J-AC-CR-004-26	Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ ՄԻԵԴ պրակտիկա	4
5.	J-AC-CR-005-26	Կոռուպցիայի կանխարգելման արդի հարցերը	6
6.	J-AC-CR-006-26	Տնտեսական հանցագործությունների քննության առանձնահատկությունները	4

7. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՄԲ ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՓԱԹԵԹ

Փաթեթ 1.

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-AC-CV-001-26	Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման արդի հիմնահարցեր	12
2.	J-AC-CV-002-26	Ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ հայցի (նախնական) ապահովման միջոցների կիրառումը և ապացույցների (նախնական) ապահովումը	8

3.	J-AC-CV-003-26	Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջի քննությունը դատարանում	12
4.	J-AC-CV-004-26	ՄԻԵԴ-ի պրակտիկան ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի վերաբերյալ	4
5.	J-AC-CV-005-26	Միջազգային պայմանագրերի անմիջական կիրառման առանձնահատկությունները և միջազգային համագործակցությունը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացում	4

8. ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՄՈԴՈՒԼ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-D-001-26	Փաստարկում և հռետորաբանություն	40
2.	J-D-002-26	Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն. կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը	40
3.	J-D-003-26	Սեռով պայմանավորված, ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրները	40
4.	J-D-004-26	Միջազգային աշխատանքային իրավունք	40
5.	J-D-005-26	Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարում	40
6.	J-D-006-26	Դատավորի վարպետություն և դատական էթիկա	40

Հավելված 2
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2025 թվականի
նոյեմբերի 26-ի ԿԽ-08/25/2 որոշման

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատավորների 2026թ. հատուկ ուսուցման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսի համառոտ նկարագիրը:
2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:
3. Ծրագիրը նպատակաուղղված է դատավորների մոտ հրազենի գործադրման հմտությունների ձևավորմանը և դրանց շարունակական կատարելագործմանը:
4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:
5. Ուսումնառության ժամաքանակը նախատեսվում է 6 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է մեկ օր ժամկետով:
6. Հատուկ ուսուցման ժամանակացույց է սահմանվում 2026 թվականի սեպտեմբեր ամիսը:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԸ (ԴԱՍԸՆԹԱՑԸ) ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-S-001-26	Հրազենի գործադրման հմտություններ	6

1. J-S-001-26. Հրազենի գործադրման հմտություններ

Դասընթացը պայմանավորված է դատավորների մոտ հրազենի գործադրման, զենքի հետ վարվեցողության հմտություններ ձևավորելու և դրանք կատարելագործելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հրազեն գործադրելու, պահելու, տեղափոխելու անվտանգության կանոնները, հրազենային վնասվածքներ ստացած անձանց առաջին բժշկական օգնության հիմունքները, ինչպես նաև հրազենի կիրառման գործնական պարապմունքները: